

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ • Կաթողիկոսական ընտրութիւն ՇԱՀԻՆ
 ԿՐԹԱԿԱՆ • Գիշերօթիկ վարժարան եւ դպրոցական կեանք Ի Ֆռանսա եւ
 յԱնգլիա • (Կ. ՎԱԼՊԷՌ) Թարգմ..... ՎԱՀԱՆ Մ. ԷՍԵԱՆ
 ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ • Առողջապահութիւնը որպէս գործիք ազգութեանց
 զարգացման
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ • Սեւուկ • (Յ. ԲՐԱԴԻ) Թարգմ..... ԱՐՍՈՒԿԷՍ
 ՆՈՐԱՎԷՊ • Լուսանկարին (ԱԼՖՈՆՍ ՏՈՏԷ).....
 ԶԱՆԱԶԱՆՔ • Գերութիւնն Ի Պրէզիլիա.....
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ • Արտաքին, Ներքին, Աղգային.....
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ • (ԿԶԱՎԷՅ ՏԸ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ..... Մ. ԶՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ — տարեկան Կէս ոսկի Օսման •
 » » վեցամսեայ Բառ » »
 Գաւառներ տարեկան Կէս » »
 Օտար քաղաքներ » 12 Ֆրանք
 Թղթատարութեան ծախք » 18 դան • արծաթ
 Մէկ թերթին գինն է..... 60 փարայ

Մասիսի Խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա. 45 մարտ

ԸՆԹԱՅԻ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի		110
3 » » » (վճռակն)	109	8/8
3 » Բարի է » (պանքայի)	23	
» » » (վճռակն)	23	7 1/2

ԸՆԹԱՅԻ ԱՐԺԵԹՂՈՅ

Օսմանեան Գոնսոլիտի

	Դաշեկան	
Երէկ Երեկոյ գոց. (Միաց. D. Սէրի	49	4
Պորսային գոցուելէն վերջը »	48	38
Բերայի մէջ	48	36
Առաւօտուն բացուեցաւ »	48	33
Բարձրագոյն գին	48	33
Նոսազագոյն »	48	29 1/2
Կէս օրին	48	30
Փոխառութիւն 1858) A. Սէրի Գ. Կ. Ա. Ո. 35		
» 1862)		
» 1860)		
» 1863) B. » Գ. Կ. » » 49	30	
» 1872)		
» 1865)		
» 1869) C. » Գ. Կ. O. » 48	28	
» 1873)		

ԻՆՆԻՖԻԷ ԵԳԻՍՏԱԿԱՆ

Երէկ Իրեկուն գոցուեցաւ	74	20
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	74	40
Կէս օրին	74	7 1/2

ԲԱԺՆԵՏՈՄՈՒՅ

Սօխեթէ Ժէնէրալ	Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3	46
Գետի Ժէնէրալ	» » Օսմն. »	7	2
Պանք տը Գ. Կ.	» » »	5	22
Սօս. Շանժ է վալէօր	» » »	3	32
Թրամուէյ	» » »	277	1/2
Բուսէլի Երկաթուղի	Ֆր.	46	75
Օպլիկատի տը Բրիտիթէ	»	—	
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»	67	

ԸՆԲԱԳՔ ՂՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	ղրշ. ...	400
20 Ֆրանկոնոց	» ...	87 24
Անգլիական ոսկի	» ...	110 6
Բօլ Իմբէրիալ	» ...	90 8
Բրիմից	» ...	54 15
Ուսպլի Թղթագրամ	» ...	8 76
» արծաթ	» ...	89 20
Ֆրիօրին	» ...	9 2
Մէճ. արծ. (տարբ.)	» ...	107 4
Վեցնոց	» ...	402 25

Հինգնոց	» ...	402 35
Մէթալիք	» ...	99
Պղինձ	» ...	—
Թղթագրամ	» ...	—

ԵՆՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 25 Մարտ, Ժամ 5 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քօնսօյիտէ գոցուեցաւ	97	1/16
Օսմն. » Սէրի S. բացուեցաւ	47	7/16
» » » գոցուեցաւ	47	1/2
» » » Ա.	35	1/4
» » » Բ.	20	—
» » » Գ.	47	5/8
Փոխառութիւն 1877	84	1/2
Պանք Օթօման	43	5/4
Ուսպլի փոխառ. 73 (գ. 4.)	92	5/8
Եգիպտական միացեալ (Ինիֆիէ)	67	—
» առանձն. (բրիտիլէթիէ)	87	1/8
Տայրա Սանիէ	65	—
Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ)	85	1/4
Հունգարական պարտաթուղթ 1877	—	
Փոխառութիւն Բարիդի վրայ	—	

Վիեննա, Պորսան գոց է տօնի պատճառաւ
Փոխառականութիւն Լոնտոնի վրայ

Օսմանեան Երկաթուղի

Բարիդ, 25 Մարտ, Ժամ 45 վայր. Երեկոյ

Ֆրանսական Ուանթ 4 1/2 0/0.....բաց	410	40
» » 3 0/0.....բաց	81	55
Օսմանեան քօնսօյիտէ բացուեցաւ	47	95
» » գոցու. գ. 4.	47	87 1/2
Միացեալ պարտք Սէրի Բ.	20	80
» » Գ.	47	90
» » Գ.	—	—
Օսմանեան Երկաթուղի	48	50
» Իէթի բաժնեթուղթ	—	—
Պանք Օթօման	597	50
Գրէտի Լիօնէ	—	—
» Ֆօնսիէ գ. 4. Բարձրացում 1382	50	
Բաժնետոմս Լիօնի (գուբ. կար.)	1286	25
Սուէզի ջրանցք	2454	25
Ուսպլի 5 0/0 1877 (գ. 4.)	98	1/2
Իտալական Ուանթ (գ. 4.)	97	50
Եգիպտական միացեալ գոց	340	
Սպանիական (արտաքին) (գ. 4.)	61	1/8
Բրիտիթէ Թիւրք	402	50
50/0 Հելլենական (գ. 4.)	350	
Չէք Լոնտրայի վրայ	25	55 (°)

ԲԱՐԻՁ ԲԹԻԹ ՊՈՐՍԱ

Մարտ 25, Ժ. 11, վ. 30	
Ֆրանս. Ուանթ, 4 1/2 0/0.....	410 48 5/4
Օսմանեան »	47 70
Եգիպտական միացեալ	340

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34րդ ՏԱՐԻ

1885 ՄԱՐՏ 16

ԹԻԽ 3761

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 16 ՄԱՐՏ

ԱԶԳԱՅԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Նշանաւոր օրը կը մօտենայ : Երկու ամսէ պակաս ժամանակամիջոցի մէջ յայտնի կը լինի Մայր Աթոռոյ Գահակալը :

Ինչպէս դիտելի է, հայ ժողովուրդը երբէք չէր ցոյց տուած ուրիշ ընտրութեանց առթիւ ա'յսչափ հետաքրքրութիւն, ա'յսչափ նախանձախնդրութիւն արժանաւորագոյնին ընտրութեան համար, որչափ անցեալ տարուան եւ ներկայ Կաթողիկոսական ընտրութեանց ժամանակ : Ամեն դաւառիւր ձայնը բարձրացուց, ամեն ոք յայտնեց իւր կարծիք : Տարակոյս չկայ որ ժողովուրդի կողմէն ներկայ արտասովոր հոգածութիւնը դէպ ի Մայր Աթոռը, վերագրելի է ժամանակի յառաջդիմութեան հասնածայն կատարուած զարգացման մը : Ո՛րչափ որ մեր քայլերը տկար լինին, ո՛րչափ որ շատ ետ մնացած լինինք ժամանակի ընթացքէն, բայց եւ այնպէս անշուշտ չենք կարող բոլորովին անմասն մնացած լինիլ մեր շուրջը կատարուած յառաջդիմական շարժմանց :

Յանկալի է անշուշտ որ ընտրութեանց առթիւ տեսնուած այս հոգածութիւն շարունակուէր նաեւ ընտրելի Կաթողիկոսի ապագայ գործունէութեան նկատմամբ : « Ժողովուրդը կը հետաքրքրուի, կը շարժի Կաթողիկոսութեան ընտրութեան ժամանակ, կ'ուրախանայ, չնորհաւորական հեռադրեր կը տեղացնէ ընտրութենէ վերջ, իսկ անկից յետոյ շարժումը կը դադարի, ամենքը կը լռեն եւ կը թողուն Կաթողիկոսը

միայնակ, դէմ յանդիման ահագին դժուարութեանց, այլ եւս ո՛չ ոք կը մտաբերէ Խմբածնի մէջ Կաթողիկոսի մը գոյութիւնը : Այսպէս կը խօսէր անցեալները մի բարձրաստիճան եկեղեցական եւ ամենքս դիտենք թէ ո՛րչափ ճշմարիտ են նորա խօսքերը :

Սակայն Մայր Աթոռոյ այժմեան վիճակը այժմ ամե'ն ժամանակէ աւելի պէտք ունի հայ ժողովուրդի մասնաւոր հոգածութեան առարկայ լինելու : Ո՛չ մի հայ մարդ, որ կարող է ըմբռնել Խմբածնայ դահու այժմեան կացութիւնը, չէ կարող անտարբերութեամբ վերաբերուիլ դէպ ի նա, չէ կարող չըմբռնել այն ծանրակշիռ դրութիւնը, ում պիտի ենթարկուի նորընտիր Գահակալը : Եւ յիշուի ի՞նչ կը տեսնենք, եթէ միանգամ դարձունենք աչքերունիս դէպ ի Մայր Աթոռը, եթէ ոչ շատ մը թանկագին իրաւունքներ վտանգի ենթարկուած, Արարատեան Գահը մօտ երկուքուկէս տարիներէ ի վեր տմայացած, ճեմարան մը՝ քայքայման մօտ վիճակի հասած, թեմական դպրոցներ՝ կառավարական սպառնալից տնօրէնութեան մատնուած, եւ. եւ : Ո՛վ պէտք է դարման տանի այս տխրալից վիճակին : — Նորընտիր Կաթողիկոսը — կը պատասխանուի անշուշտ. բայց ի՞նչ կարող է անել մի մարդ, ո՛րչափ ալ օժտուած լինի հազուադիւրս կարողութիւններով, որ աւերակաց վրայ տիրելու կ'երթայ, որ պէտք է կուռի արտաքին վտանգներու եւ ներքին զեղծումներու դէմ, եթէ իւր կողմը չունենայ ժողովուրդը, եթէ աջակիցներ չունենայ իւր կատարելի գործին համար : Այս պատճառաւ մենք շատ կարեւոր կը համարենք որ ժողովուրդի ներկայ արտասովոր

եռանդը կանգ չառնու ընտրութենէ յետոյ :

Որպէս զի այս ցանկալի արդիւնքը յառաջ գայ, որպէս զի ժողովուրդը չարունակէ իւր հոգածութիւնը նորընտիր Կաթողիկոսի ապագայ գործունէութեան նկատմամբ եւս, անտարակոյս կարեւոր է որ Եջմիածնի Գահակալը լինի այնպիսի եկեղեցական մը, որոյ վրայ հայ ազգը կատարեալ վստահութիւն ունենայ, որ իւր կատարած գործերով զօրաւոր ժողովրդակաւութիւն մը վայելէ իւր Ազգին մէջ, եւ որ վերջապէս Ազգի մեծամասնութեան ընտրելին լինի : Ո՛վ է այդ եկեղեցականը : Առանց անուշը յիշել հարկ լինելու, հայ ժողովուրդը արդէն իմացաւ որ դա այն է, որոյ համար մայրաքաղաքի եւ գաւառաց մէջ այնչափ եռանդուն ժողովրդական ցոյցեր կատարուեցան, այն եկեղեցական, որոյ ընտրութեան դէմ ո՛չ մի գրիչ, ո՛չ մի բերան չը կարաց չարծիլ, երբ ամեն ընտրելի անխնայ բանադատուեցաւ տարբեր ընտրելի ունեցողներու կողմէն, այն բարձրաստիճան եկեղեցական, որ անտարակոյս հայ Ազգի ամենաստուգար մեծամասնութեան ընտրելին է, որոյ անունը կ'արտասանեն ամեն բերաններ, Բեդրասուրկէ մինչ Կալիպա, Կ. Պոլսէն մինչ Գալիքի : Արդեօք հարկ կ'աւելու որ այդ պատկառելի եկեղեցականն է **ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ** :

Քննենք միանգամ Հայրիկի կեանքը եւ պիտի տեսնենք որ դա միշտ նուիրուած է եղբր հայ Ազգի օգտին : Յրբէ՛ք անարժան գործ մը, երբէ՛ք շահասիրութիւն եւ նենգութիւն, երբէ՛ք մեղաւարտ փառասիրութիւն չեն կարողացած դարանել զայն : Բազմատեսակ ասպարէզներու վրայ Հայրիկը ծառայած է իւր Ազգին . նա եղած է Ուսուցիչ, Հեղինակ, Քարոզիչ, Խմբագիր, Վարդապետ, Վանահայր, Առաջնորդ, Պատրիարք, եւ այդ ամեն ասպարէզներու վրայ ունեցած է միշտ նշանաւոր դեր, ցոյց տուած է միշտ արտաքոյ կարգի տաղանդ : Հայրիկն եղած է միշտ իւր Ազգին համար նշանաւոր, հաւատարիմ գործիչ :

Իբրեւ «ստեղծ» կը տեսնենք Հայրիկն, որ այնպիսի ժամանակի մը մէջ, երբ կըրթութեան գործն շատ յետնեալ աստիճանի մէջ էր, մեծ զարկ կը տայ նմա, կը բանայ

վարժարաններ, եւ իւր սահմանափակ միջոցներով կը հասցունէ աշակերտներ, որք այսօր կարեւոր տեղ մը կը գրաւեն հայ դրագիտական, եկեղեցական եւ ուսուցչական դասուն մէջ :

Պէտք է տեսնել Հայրիկն իբրեւ հեղինակ, որոյ բազմատեսակ երկերը, որք եւրոպական գրականութեան անգամ պատիւ կառող էին բերել, անյագաբար կը կարդացուին եւ որովք Հայրիկը մերթ կը հնչեցնէ իւր քնարը, կ'ողբայ յիշատակարանաց վրայ, մերթ խոր ուսումնասիրութեամբ կը քննէ Հայոց ընկերային եւ տնտեսական խնդիրները, մերթ կը խրատէ, մերթ կը խորհրդածէ . Ազգին վիճակը երբէք անտարբեր չգտնէր նորա գրիչը :

Իբրեւ «արդէն» եւ իբրեւ «բոլոր» կը տեսնենք Հայրիկը միշտ շրջապատուած հիացող ժողովուրդի եւ հիացող ընթերցողաց ահագին բազմութեամբ : Եկեղեցական եւ խմբագրական բեմին վրայ նա միշտ նոյն անկեղծ, նոյն համարձակասօս մարդն է . իւր պերճախօս ձայնը եւ նշանաւոր գրիչը ամենուրեք նոյն դիւթիչ առանձնայատկութիւնն ունին :

Կը տեսնենք Հայրիկն իբր «արտադր», որ խորապէս թախանցած քրիստոնէական վարդապետութեանց, իբրեւ ճշմարիտ վարդապետ եւ ճշմարիտ ուսուցիչ Աւետարանի կը փորձէ մի տարբեր ուղղութիւն, կ'ուսուցանէ ժողովուրդին Աւետարանի ճշմարտութիւնները : Հայրիկը միեւնոյն ժամանակ, իբրեւ Հայաստանեայց Եկեղեցոյ հարազատ դաւակ, կը խռովի երբ նորա դէմ յարձակում կը տեսնէ օտար եկեղեցոյ եւ օտար կղերի կողմէն, երբ օտարները եւ օտարամոլները կը յանգդին մուր պարզել դէպ ի նա :

Կը տեսնենք Հայրիկն իբր «նահապ», որ գրիչը եւ բրիչը յաջողութեամբ կը գործածէ . Աստուծոյ տաճարն կից կը բանայ լուսոյ տաճարը, գութանին մօտ կը հաստատէ Կութթէմպէրկի գործին : Անողորմ ի՛ր յախշտակողներու, խիստ՝ բռնաբարողներու ընդդէմ, որ գիտէ ճշմարիտ տնտեսագիտութեամբ Ազգի օգտին գործածել նոցա մինչ ցայնժամ դրպաններու մէջը կորսուած դնածները :

Իբրեւ «առաջնորդ» կը տեսնենք Հայրիկն,

որ հայրական խնամ, ծնողական գործով ունի ժողովուրդին համար. չէ կարող մնալ անկարեկիր, երբ մերկ տեսնէ ժողովուրդի մի զաւակը, երբ հաց կը խնդրէ նորա սոված մի որդին: Աստարեալ մարմնաւորում Աւետարանի այն խօսքին, — « Հովիւ քաջ զնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց »: Եւ ո՞չ ապաքէն այս պատճառաւ արժանացած է ՀԱՅՔԻԿ մականուան:

Վերջապէս կը տեսնենք Հայրիկն իբր Պարբեր, որ բարձր կանգնած իւր նախորդներէն՝ նշանաւոր դեր կը թողու ժամանակակից պատմութեան մէջ: Այլնայ Հայրիկը գահէն, զոր պահելու համար անարժան միջոցներ չը փորձեր, բայց իւր համբաւը անաղարտ, իւր ժողովրդականութիւնը անասան կը մնան միշտ, թերեւս միակ բացառութիւն, զոր կարելի է տեսնել ժամանակակից պատրիարքաց պատմութեան մէջ:

Շատերը անշուշտ միեւնոյն ասպարէզներու մէջ գտնուած են, սակայն ժամանակակից պատմութեան մէջ, գոնէ մենք, չենք յիշեր ուրիշ մէկը, որ ունենար այսչափ բազմատեսակ ասպարէզ եւ բոլորին մէջ եւս գործէր նոյնչափ տոկուն հաստատումութեամբ, նոյնչափ փայլուն յաջողութեամբ: Եւ որ ամենէն աւելի զարմանալին է, Հայրիկը բոլոր այս ծառայութիւնները, ուսուցչական ասպարէզէն սկսեալ մինչ Հայոց բարձրագոյն պատրիարքական ասպարէզը, կարող եղած է մատուցանել իւր Աղգին միսիայն իւր բնածին հանձարով, առանց մասնաւոր պատրաստութեան, առանց բարձրագոյն համալսարանական կըրթութիւն մը ստացած լինելու:

Թո՛ղ հայ ժողովուրդը բարձրացնէ զայն Ամենայն Հայոց Հայրապետական Գահուն վրայ, վստահ լինելով որ Հայրիկը, այդ բարձր գահուն վրայէն ալ, նոյն անկեղծ, նոյն անհաշատ զործունէութեամբ պիտի ծառայէ իւր Աղգին շահուց: Էջմիածնի մէջ այնչափ աւելի՛ կարեւոր է Հայրիկի նման մի արիասիրտ, ժողովրդական, վստահելի եկեղեցականի ներկայութիւնը, որչափ որ վտանգի ենթարկուած կը տեսնենք այն շահերը, զորս կը յանձնենք ապագայ կաթողիկոսի խնամոց, շահեր՝ զորս կարող ենք անշուշտ վստահիլ միայն այնպիսի ձեռքեր-

րու, զորս փորձած ենք, որք գիտենք թէ մեզ չեն դաւաճաներ: Եւ ո՞չ ապաքէն միակ եկեղեցականը, զոր առթթ ունեցած ենք փորձելու բազմատեսակ ասպարէզներու վրայ, որ գիտենք թէ բովանդակ անձամբ նուիրուած է իւր Աղգի օգտին, է Հայրիկը: Ընտրե՛նք զինքը:

Բայց ընտրողը ժողովուրդը չէ: Նա արդէն ընտրած է իւր երեսփոխանները, որք, ըստ Սահմանադրութեան, ի ղրկաց Թուրքահայոց կը կատարեն ընտրութիւնը: Ձենք կարող տարակուսիլ որ Աղգային ժողովը, յառաջիկայ ընտրութեանց մէջ, կը լինի ճշմարիտ ներկայացուցիչ այն ժողովուրդին, զոր ներկայացնելու պաշտօնն ունի: Միթէ պէտք կա՞յ ապացուցանելու որ, այդ ժողովուրդի ամենատուար մասն Հայրիկի կողմն է: Թո՛ղ իւրաքանչիւր ընտրող տանի ձեռքը իւր խղճի վրայ, լրջութեամբ ուսումնասիրէ Հայրիկի կեանքը, թո՛ղ բաղդատէ զայն ուրիշներու հետ, որք գուցէ ապագայ աւելի կարեւոր պաշտօններու գլուխը փորձուելով, կարող լինին ցոյց տալ լաւագոյն տպացոյց մը իրենց վարչական կարողութեան, եւ ըստ այնմ տայ իւր քուէն: Ձենք կարող տարակուսիլ որ այդ քուէի պարունակութիւնը կը լինի **ՈՐԻՍԵԱՆ ՀԱՅՔԻԿ**:

« Ո՛վ կաթողիկոսական ընտրութեան մասնակցողք, եթէ կը սիրէք ձեր Աղգը, ձեր Եկեղեցին, ընտրեցէ՛ք Խրիմեանը » կը կրկնենք մեք ալ Պ. Մերենցի հետ:

ՇԱՀԷՆ

Կ Ի Թ Ա Կ Ա Ն

(Կ. Վ. Ա. Լ. Պ. Ե. Բ.)

ԳԻՇԵՐՈՒԻԿ ՎԱՐԺԱՐԱՆ

ԵՒ

ՊՊՐՈՑԱԿԱՆ ԿՆԱՆՔ

Ի Ֆրանսա և յԱնգլիա

Այն ցաւալի շփոթութիւնը որ վերջերս տեղի ունեցաւ Լուի-լը-Վաան Լիկէոնի մէջ, տեղի տուած է շատ խորհրդածութեանց եւ նիւթ հայթայթած է, ինչպէս նմանօրինակ պարագայից մէջ կը պատահի, ջերմ վիճաբանութեանց: Ոմանք բոլոր յանձնընձեռն ձգած են երիտասարդութեան մը վրայ որ անհնազանդ է, անհամբեր ամեն սանձի եւ ամեն հեղինակութեան դէմ, ժամանակէն յառաջ ազատութեամբ փափաքէն մղուած, յոյժ հակամէտ հետեւելու այն գէշ օրինակաց 'զորս իրեն կուտան անկարգ անձինք, որք ո'չ եւս երիտասարդ են, եւ հաւատարմութեանց յայտարարութեան թէ՛ ազատութիւնը կը կայանայ ոչի'նչ յարգելու եւ ո'չ ոքի հնազանդելու մէջ: Այլք յանձնընձեռն Լիկէոնի վարչութեան վերադրած են, 'զայն պարտաւած են թէ՛ չէ՛ ունեցած դիւրադարձութիւն, կենցաղադիտութիւն և անխռովութիւն, եւ թէ՛ շատ անսպասելի է դիմել բնուն դարմաններու, երբ հաշտարար միջոցներ բաւ էին: Վերջապէս ուրիշներ աւիթէն օգուտ քաղած են վերանորոգելու համար իւրեանց ամբաստանութիւններն մեր հանրային դատարարական ամբողջ դերութեանը դէմ և մասնաւորապէս դիւրօթիկ վարժարանաց դէմ, որոց նկատմամբ անտարակոյս ներելի է չարախօսել, այլ 'զորս պէտք է նկատել իւր անհրաժեշտ չարիք մը ց'որքան չը նշանակուին միջոցներ անոնց տեղը դրուուելու համար:

Կամբաստանեն 'զմեզ թէ յոյժ դոհ ենք մենէ, եւ սակայն եթէ կը սիրենք զմեզ դովել, կը սիրենք նաեւ 'զմեզ պախարակել: Հաճոյ է մեզ կարեւորութիւն չը տալ այն

առաւելութեանց 'զորս ունինք, եւ չափազանցել մեր հաստատութեանց անսպասելիութիւններն եւ թերութիւններն: Մտնաւանդ մեր երկրորդական կրթութեան հաստատութեանց նկատմամբ է որ ծայրայեղ քննադատութիւններ կ'ընենք: Այն անձերն որք 'զանոնք ամենէն աւելի կը պարտաւեն ընդհանրապէս այնպիսիք են որք ուսուցչութեան ու եւ է փորձ ըրած 'չեն եւ կ'անգիտանան թէ ամենադժուար առարկայից մէջ ամենէն աւելի փշալիցն է այս: Այս ինչ անձը անկարող է կրթել իւր շուքը, որ միշտ անկիրթ շուք մը պիտի մնայ, եւ սակայն իւր ձայնը կը բարձրացնէ իւր դուռկաց դատաւարներուն դէմ եւ կը համոզուի թէ քիչ մը բարի կամեցողութեամբ ոչինչ աւելի դիւրին պիտի լինէր քան հիմնել Լիկէոններ ուր կարելի պիտի լինէր, առանց բռնութիւն ի դորձ դնելու, անոքել ամենի նաւելի դաժան բնաւորութիւններն, չնորհիւ կատարելագործեալ դրութեանց, ծոյրերն պիտի կարենան ուսնիլ անդ անքան հաճութեամբ որքան հաճութեամբ որ ոչխարներն խոտ կ'ուտեն կամ էջերն շատ կը խմեն երբ ծարաւի լինին: Մեզ կը հաւատեն թէ նմանօրինակ հաստատութիւններ կը գոտուին Ֆրանսայէն դուրս: Արդեօք ո'ւր կը գոտուին: Աստուանք որ ցուցնեն մեզ:

Ի'նչ որ պարտաւոր էր այդ երազատեաներուն ուշն հրաւիրել, սա է թէ այն օտարազգիներն՝ որոց հաստատութիւններն կը դովեն՝ կը զարմանան մեր թէ ի'նչպէս այլք նախանձելի կը գտնեն 'զանոնք, մինչ իրենք առաջինն են բարձրաձայն պահանջելու իրենց վարժարանաց բարենորոգումն: Երբ համայն աշխարհ կը տրտնջայ, կրնան գտնուիլ կարծողներ թէ այդ արտունջն տանիրաւ է եւ թէ պէտք է զեղչել 'զայն: Պ. Մաթիու Արնօլտ, անգլիացի տաղանդաւոր հեղինակ մը, չ'է վարանած յայտարարել թէ իւր հոգեբանական մեծ մասը կը բաղկանայ բարբարոսներէ, որք մանուսնադաշնակալանաց մէջ կը նշմարուին, նիւթապաշտներէ, որք կը կազմեն քաղաքացւոյ մեծ մասն, եւ անարդ ամբօխէ մը 'զոր խստութեամբ կ'անուտեն խուժան(1): Նա

(1) Ինչպէս արդէն ուրիշ անգամ «Մտիս» ի մէջ ըսելու առիթ ունեցած ենք, Կ. Վալդեր Ֆրեյդանական Արդիմիոյ անգամ Պ. Վեբեր Շերպիլիէի ծածկանունն է:

(1) Culture and Anarchy, an essay in political and social criticism, by Matthew Arnold.

կը կարծէ թէ ընկերութեան այս ինչ կամ այն ինչ դասակարգի նկարագիրը կախում ունի մանաւանդ այն եղանակէն որով նա կը յղանայ երջանկութիւնն, եւ բարբարոսներն, ըստ իւր կարծեաց, լոկ կը սիրեն պաշտօն, պատիւ, մարմնակրթանք, ձիւնթացք եւ արմկայող հաճոյք: Նիւթապաշտներն լոկ կ'ախորժին գործոց տենդէն, զորամ շահեւու արհեստէն, տխրակեցութենէ եւ բարբանջանքէ: Գալով խուժանին, նորա միակ երջանկութիւնն է աղաղակել, ծեծկաւիլ եւ ամեն բան ջախջախել (bawling, hustling and smashing), ասոնց վրայ յաւելելով աժան գարեջուր: Պ. Մաթիոս Արնօլտ կը կարծէ թէ Անգլիոյ մէջ հանքային դաստիարակութիւնն անբաւական է, թէ նա կը ձկտի ստուարացունել բարբարոսներու եւ նիւթապաշտներու թիւն եւ քիչ կ'աշխատի ամօքելու համար խուժանին գաղանթութիւնն, թէ լաւ պիտի լինի որ կառավարութիւնը միջամտէ, թէ լոկ պետութեան անկ է կրթել եւ դաստիարակել ժողովուրդներն, եւ թէ Ֆուանսա օգուտ քաղած է այս դրութենէն: Սակայն ո՞վ կը համարձակի ուրանալ թէ մենք ալ, Անգլիացւոց պէս, չ'ունինք մեր նիւթապաշտներն եւ մեր բարբարոսներն: Այլ գուցէ մերինները ուրիշներէն նուազ անզգայ են ինչ ինչ մոռաւոր հաճոյից, գուցէ քիչ մ'աւելի յարգանք կը տածեն անոնց նկատմամբ որք իրենց կը հայթայթեն այդ հաճոյքներն: Այս պարագայն մեր ազգին հանճարէն յառաջ կուգայ. կրնայ նաեւ յառաջ գալ մեր դաստիարակութենէն, եւ ներքին է ասկէ եղբակացունել թէ, ի՞նչ ալ ըսեն, մեր լիկէոններն լաւ կողմեր ունին:

Բայց անոնք որք կը պարստաւեն զայնա, կը գանգաւորն մասնաւորապէս թէ հոն իւրեանց դաստիարակութիւնն ընդունող գիշերօթիկներն շատ դժբախտ են եւ կը հեծեն տաժանելի գերութեան մը մէջ: Անոնք խիստ եւ միօրինակ կանոնի մը եւ իմաստական եւ ստէպ աննշան կարգապահութեան մը ենթարկուած, անձուկ տան մը մէջ դիզուած, այնպիսի բակի մը մէջ զբօսանք ընելու ստիպուած ուր դժուարաւ կրնան շարժիլ, կը նկատեն լիկէոնն իբր մի բանա, տխրութեամբ կը հաշուեն այն տարիներն եւ ամիսներն զորս զեռ պիտի անցունեն

անդ, եւ այն օրն՝ որ դուրս կ'եննեն անտի՛ իրենց համար ցնծութեան եւ վրկութեան օր մ'է: — Տեսէ՛ք Անգլիացիներն, կ'ըսեն մեզ: Անոնք Իդընի, Հարօի կամ Բակպիի մէջ ալ ուսումնասիրած լինին, միշտ արտօրժանօք կը յիշեն իւրեանց դպրոցական կեանքն: — Ասոր չ'ենք հակառակիր. ընդհանրապէս Անգլիացիներն մենէ աւելի յօժարակամ կը յիշեն իրենց դպրոցական կեանքն: Ասոր համոզուելու համար բաւ է կարդալ այն հետաքրքրաշարժ պատմութիւնը՝ զոր վերջերս հրատարակեց Իդընի նախկին աշակերտ մը, Պ. Պրինսլի-Ռիչարտս, որ անշուշտ ո՛չ բարբարոս մ'է եւ ո՛չ նիւթապաշտ մը, այլ որ, Պ. Մաթիոս Արնօլտի պէս գաղափարական խմաստասէր մ'ալ չը լինելով հանդերձ, անկէ աւելի տրամադիր է հաւատալու թէ Անգլիոյ համար բաւ է մնալ ինչ որ է, որպէս զի աշխարհի առաջին երկիրը եւ բոլոր կարելի թագաւորութեանց կատարելագոյնն հանդիսանայ (1): Պ. Պրինսլի եօթ տարի կեցած է Իդընի մէջ, եւ կը հաւաստէ թէ այն կառքը որ Սեպտեմբերի գեղեցիկ երեկոյ մը առաջնորդեց զինքն իւր դաստիարակին (Tutor) տունն, այսինքն այն գիշերօթիկ յարկն ուր պիտի օթեւանէր, դրախտի մը գուռը տարած եղաւ զայն: « Մասնաւոր վարժարանի մը ստրկութենէն ազատած կամ մայրենի կառավարութեան քաղցր շղթայներն թօթափած մանուկը, որ կը հասնի Իդըն, առաջին անգամ կ'զգայ թէ ի՞նչ է ազատ լինիլ »:

Իդըն մտնող մանուկն լոկ ինքզինք ազատ զգալու ուրախութիւնն չ'ունի. եթէ տասնամեայ իսկ լինի, դարձեալ իսկոյն իրաւունք կը ստանայ իւր մանկական գլխոյն վրայ կրել մետաքսեայ եւ դրանպճեւ գլխարկ մը: Պ. Պրինսլի այնքան ակորժով վայելեց այս հաճոյքը որ այսօր իսկ, երբ գլխարկ մը դնէ, չ'է կարող լսել զայն շրջապատող թուղթէ պահպանակին խոչընդոտանց հեշտալի յոյզ մը զգալու: Կերեւաւ կայէ վերադառնել իւր առաջին գլխարկ որ 46 հարիւրորդամէջը բարձրացուց իւր հասակ: Նաեւ, ի՞նչ օրհնութիւն է իրեն յա-

(1) Seven years at Eton, by James Brinsley Richards, London Richard B. Cutley and Son, 1883.

տուել սենեակ մը եւ ըտլորովին նոր կահեր ունենալ, քանի որ Խղընի անձնիւր աշակերտն իրաւունք ունի ստանալ նոր դրասեղան մը, նոր գորգ մը, նոր սփռոց մը, ամաններով լի դարան մը եւ մետաղեայ թէյյաւան մը: «Հետաքրքրութեամբ ընկել այս գանձերն այն քաղցր տպահոլութեամբ թէ քուկդ ես, դարանիդ մէջ տեսնել թէյյի եւ շաքարի շաքարակոն բաժինդ որ անբաւաւ կը թուի եւ չոր կը դործածես ըստ հաճոյս, լսել պատահիլէ թէ սենեակիդ մէջ պիտի առնուս թէյյդ եւ նախաճաշդ, ահա հաճոյք մը որ անմիջապէս կը յաջորդէ մետաքսեայ գլխարկ մ'ունենալու հաճոյքին: Առաջին անգամ որ տարածեցի արվուոցս սեղանիս վրայ եւ նստեցայ ինձ հետ առանձին նախաճաշելու համար, իմ յատուկ կարեւորութեանս զգացումն միեւ զիս պատառաքաղս շուրթերուս տանիլ աւելի հանդիսաւոր կերպիւ քան հանրային խնճոյքի մը հրաւիրուած այն վեհերոտ մարդն որ պիտի արտասանէ անդ իւր առաջին ճառ: Սակայն երկու երեք օր յետոյ, յօժարակամ ընդունեցայ չորրորդ կարգի երկու աշակերտաց առաջարկն, ոյք իմինիս կից սենեակին մէջ կը ճաշին եւ որք հրաւիրեցին 'զիս մասնակցիլ իրենց հացկերոյթին»: Մետաքսեայ գլխարկ մը, առանձին սենեակ մը, թէյյաւան մը, ում նկատմամբ մարդկրնայ ըսել թէ միայն ի՛նքն է, այսպիսի հեշտութիւնք անձանթի եւ Առանսայի ուստնողաց: Ստոյգ է թէ Պ. Պրինսլի տարին հինգ հազար ֆուսնք կը վճարէր անոնց համար: Ռուսօ ըսած է թէ ուրախութիւնն աւելի բարեկամ է լուսայներուն քան ոսկիներուն. բայց սովորաբար անգլիական ուրախութիւններն թանկ են:

Թէեւ մարդկային բնութեան մէջ անխախտ հիմ մը կայ, անձնիւր ժողովուրդ ունի իւր բարքերն, իւր ճաշակներն ինչպէս նաեւ իւր տհաճութիւններն, եւ ինչ որ մէկուն հաճոյ է՝ միւր հաճոյ չլինիր միւսին: Խղընի դրախտին մէջ կան մի քանի մանրամասնութիւնք, մի քանի սովորութիւնք, որք անոր բնակութիւնը տաժանելի պիտի ընէին ֆուսնակաւ ուսանողաց, դեռ համադրային դրախտ մը հնարուած է: Շատ կը տարախուսինք, 'չոր օրինակ, թէ կարելի լինի մեր երիտասարդութեան հաճոյացնել

Ֆալէնկ (ծառայութիւն) կոչուած սովորութիւնն, որ ստորին կարգի նորեկ աշակերտներն կը դատապարտէ մեծ աշակերտաց ամենահազանդ ծառայն, դործակատարն եւ մերթ զմէկ լինել: Անգլիական ժողովուրդն ամեն ազգէ աւելի հաւատարիմ մնացած է միջնադարի յիշատակաց եւ աւանդութեանց, եւ աւատական դատարարութեան նկարագրին էր նկատել ծառայութիւնն իբր ամենուն համար ունանելի առարկայ մը: Ասպետ լինելէ յառաջ, մանկլուսիկ եւ ապա պիտակիւ կը լինէին: հրամայելու իրաւունք ստանալէ յառաջ, պէտք էր անցած լինել հնազանդութեան բոլոր աստիճաններէն. Տէր լինելէ յառաջ, սպասաւոր կը լինէին. իրեն երթարկուած մարդիկ ունենալէ յառաջ, երթակայ կը լինէին մէկուն: Ասկէ բան մը մնացած է ֆալէնկն մէջ, եւ անգլիական վարժարանի մէջ անցած ժամանակը կը բաժնուի երկու շրջանի, այն որ աշակերտն մէկուն ծառան կը լինի եւ այն ուր ծառաներ ունենալու եւ 'զանոնք գաւաղանով վարելու հաճոյքը կը վայելէ:

Ճշմարիտ խօսելով, ֆալէնկը, այժմ այնքան հարստահարիչ չէ որքան էր երբեմն, եւ բարքերն մեղմացած լինելով, փոքրերու նկատմամբ մեծերու բռնաբարութիւններն նուազ բացարձակ եղած են: Պ. Ալտորսթըն արդէն բաւական ժամանակ յառաջ դիտել տուած է թէ ինք Խղընի մէջ ոչ մին կրած էր այն ահաւոր աղէտներէ որոցմով նախապաշարած էին 'զինքը, եւ կը ծաղրէր այն մայրերուն տաղնապը որք կը մերժէին յղել անդ իւրեանց որդիներ, վախնալով որ երթակայ չը լինին փոքրիկ բռնաւորներու անդուծ ձանկին. ինք կը հաւատէր թէ բնաւ Ներոնի մը եւ Ապիգուլայի մը չէր պատահած անդ: Գալով Պ. Պրինսլի, բախտը յաջող եղաւ իրեն. Հօլ անուն աշակերտն իրեն համար տէր մ'եղաւ որ պահանջոտ էր, առանց դազան լինելու: Նա ունէր երեք ֆալ (ծառայ) եւ կ'ուզէր զանոնք իւր շուրջ տեսնել միշտ: Բնութեամբ ծոյլ լինելով, իւր սկզբունքն սա էր թէ պատուաճանաչ պատանի մը պէտք է որ երբեք կատարէ ինչ որ այլք կրնան ընել իրեն համար: Ամեն առաւօտ, ժամ իննէն մի քանի րոպէ յառաջ, Պ. Պրինսլի պարտաւոր էր սեղանը պատրաստել իւր օգոստա-

փառ տիրոջ նախաճաշին համար . չունջը կտրած կը վազէր անոր համար թարմ հաց , սեր , քաղցրաւենի , աղածոյ եւ համադամներ փնտռելու : Երբեմն ալ կը զրկէին զայն դերձակին կամ նամակատունը նամակ տանելու : Երբ Հօլ գոհ չը լինէր իւր ֆակերէն , կը պատժէր զանոնք խորովածի պատառաքաղով մը . այլ սոէպ աւելի կը սպառնար քան կը պատժէր : Այս ներողամիտ տէրն կատակի կուգար : Օր մը իւր ֆակերէն մին պնակով հաւկիթ կը բերէր իրեն , սա բարկութենէն կաս կարմիր եղաւ եւ պօռաց . « Պզտի շուն , փոքրիկ անասուն , երե՞ս ունիս եւ ինձ կը բերես այնպիսի հաւկիթներ որոց վրայ երեք սատկած ճանճ կայ : — Երե՞ք , յարեց Բակ , չափազանց զարմանք ցուցնելով , ես կը կարծէի թէ հինգ էր : Ինչ եղեր են միւս երկուքն » : Ուրիշ անգամ մը Հօլ կը տրտնջար թէ իւր թէյը տաք չէր : « Ինձ գալով , ես բաւական տաք դրտայ 'զայն , պատասխանեց Բակ , եւ կրնար հաւատալ խօսքիս , զի մատս մէջը խոթ եցի » :

Այնուհետեւ , Պ. Պրինսիփ փոխեց իւր տէրը եւ այս փոփոխութեամբ չը շահեցաւ : Պէյզ աշակերտն կատակ չը գիտէր , պէտք էր դործօն ծառայութիւն մը մատուցանել իրեն : Իւր ծառաներէն կը պահանջէր արագ եւ ճշգրտապահ հնազանդութիւն մը (Smart and blindly obedient) : Դիւրին դործ չէր ամեն բան կարգադրել անոր սենեակին մէջ , մաքրել անոր անաղէ ամաններն եւ արծաթէ սկահներն . պէտք էր չփել , յղկել եւ նորէն յղկել : Սոէպ ճաշ կուտար այլոց : Այս մեծ առիթներուն մէջ , տարապարհակ կը վարէր ամեն մարդ : Մէկը կը պատրաստէր անոր խորովածներն , միւսը տեղէ տեղ կը վազէր փոխ առնելու համար հարկ եղած գաւաթներն եւ բաժակներն , ուրիշ մը պանդուկ կ'երթար հաւ կամ ձուկ փնտռելու համար , որք ճաշին գլխաւոր կտորը պիտի կազմէին : Այս ժիր դործակատարներն իրենց յոգնութեան փոխարէն արտօնութիւն կը ստանային ուտել մնացորդներն , զորս վեհանձնութեամբ կը լքէին իրենց , ինչպէս ոսկոր մը կը նետուի շան մը :

Ինչ որ միշտ կը պատճառէր Պ. Պրինսիփին , սա էր թէ լոկ իւր օրինաւոր տիրոջ ծառայելով չէր ազատեր . սաստիկ պատժի

կենթարկուէր եթէ մերժէր հնազանդիլ բարձրագոյն կարգէ ամեն աշակերտի հրամանաց : Ֆակերն քիչ կ'ախորժէին այս անպարտական աշխատանքէն եւ կը ջանային խոյս տալ անկէ : Երբ ահագնագոյ ճայնով մը լճը պոյ (ստորին կարգի աշակերտ) ազադակուէր , տեղի կ'ունենար փախուստ մը , բացուող կամ փակուող դռներու շինքը , փախստականներու աղմուկ մը , որք իրենց անկողինն տակ կը պահուըտէին կամ սանդուղին ստորոտը կը նետուէին . ամենէն դանդաղը , զոր ականջներէն կը բռնէին , կը պատժուէր միւսներու փոխարէն : Սակայն , իրենց վրայ դրուած նեղութեանց մեծագոյնն էր օգնել երէց աշակերտաց որ պատրաստեն իրենց չարագրութիւններն : Ովրաստիկ կամ Հոմերի թարգմանութիւնը դիւրացնելու համար , Իդընի ուսանողներն , որպէս կը պատահի այլուր , գաղտնի կը ճարէին արդիւրած թարգմանութիւններ կամ արագրեալ հին տետրակներ : Ֆակ մը գրել կուտար անոնց : Ուրիշ մը , նրբուղիին մէջ դէտ կարգուած , պահպանութիւն կ'ընէր անդ : Վայ իրեն եթէ մոռնար սուլել յանցաւորներուն ծանուցելու համար չըջագոյնը դատարարակին գալուստը , որ պատրաստ էր իւր կոր մատերով յախշտակել արդիւրած թարգմանութիւններն , գարեջուրի շիւերն եւ խաղի թուղթերն : Ֆակ արհեստը դիւրին բան չէ միշտ : Ինչ որ կը մեղմէ անոր դառնութիւններն , սա է թէ ոչ մի աշակերտ , ինչ ալ լինի իւր անունը , իւր աստիճանը եւ իւր հարստութիւնն , չէ կարող խուսափիլ անկէ . « Պերճ ուսանողի մը արժանապատուութիւնը , կ'ըսէ Պ. Պրինսիփ , չը փայլի անշուշտ երբ անցնի յոյժ բազմամարդ փողոցէ մը , վրան գոց մեծ պնակով մը , որոյ համեմը կը կաթի սաղարկին վրայ . բայց արժանապատուութիւնն մի փետուր էր 'զոր լոկ հինգերորդ կարգի աշակերտ մը կրնար դնել իւր փեղոյրի վրայ : Ես տեսած եմ արդի Ուոդըրֆորտի մարդիկին զուարթութեամբ պնակ մը հաւկիթ եւ ճարպ կրելն , որք փաստաբանի մը օրդւոյն սահմանուած էին : Նաեւ Ռօզզէրիի կոմսին արագապէս փողոցէ մ'իջնելն , իւր բազուկին տակ կըրեղով քահանայի մը օրդւոյն վարտիքն : Առաւօտ մը ութ քառ փոխ տուած եմ ստո-

րին կարգի աշակերտի մը որ մոռցած էր իւր քսակը եւ որ իւր ֆակ-սպորթին (ծառայակետ) համար պարտ էր գնել աղած տառեխներ . այս աշակերտն էր Մարլպօրոյի դուքսին ժառանգորդն ։

Աւելի թանկագին միթարութիւն մը կար որ էր մտածել թէ օր պիտի գար իսկոյն ուր, հնազանդելէ յետոյ, հրամայելու հաճոյքը պիտի ունենար ։ Պ. Պրինսլի մեզ կը հաւաստէ թէ առաջին անգամ որ տեղ զրկեց իւր ֆակը, իւր սիրտը ճխաց ուրախութենէն ։ Ար յարէ ցաւով թէ միշտ պատշաճապէս չը դործածեց իւր ամենակարողութիւնն, թէ շատ շուտ բռնեց բաշայական ընթացք, խնայելով իւր շարժումներն եւ անխնայ հոգնեցունելով ուրիշին բազուկներն եւ սրունքներն ։ Ֆակսը սովորոյթ մ'է որ կրնայ ունենալ իւր լաւ կողմեր ։ Ապացուցուած է թէ այս խեղճ աշխարհն լաւագոյն լինի երբ բոլոր զեղծումներն յապաւուրին ։ Բայց այդ զեղծումն անհամաձայն է մեր բարուց ։ Մենք լոկ գրաւոր իրաւունքներուն կը յարգենք, գրամով ենք . ֆռանսացին բոլոր ժողովուրդներէն նուազ կը հետեւի սովորութեան ։ Մեր ուսանողներէ ոմանց համար շատ ծանր է հընազանդիլ իրենց քիչ սիրած մի վարժապետին, եւ անշուշտ իրենց աւելի ծանր պիտի լինէր հնազանդիլ իրենց ամենէն աւելի սիրած մէկ դասընկերին ։

Անգլիական վարժարանաց մի ուրիշ սովորոյթն, ում դժուարաւ պիտի վարժուէին մեր լիկէններուն ուսանողներն, կը կոչուի ֆլէյթ ։ Այս գոյականը կ'աժանցուի ֆլէյթայէն որ կը նշանակէ խորագանել ։ Պ. Պրինսլի կը խոստովանի թէ իւր տեսած առաջին խորագանումը յոտից ցգլուիս 'զինք եւ իւր սիրտը ցնցեց իւր կուրծքին մէջ, զերդ ահաբեկ թռչուն մը որ կը ջանայ դուրս ելնել իւր վանդակէն ։ Անձրեւոտ եւ ցուրտ առաւօտ մ'էր այն ։ Զոհը սիրուն մանուկ մ'էր, գանգրահիլ, սպիտակամորթ, որոյ միակ թերութիւնն էր քիչ մը շատ ախորժիլ խնդալ ։ Գործիքը անեղ երեւոյթ ունէր, կոթը երեք սանաջափ երկար էր ։ Աշակերտներն նստարաններուն եւ գրասենյակներուն վրայ մագլած ելած էին, այս հետաքրքրաշարժ գործողութեան բոլոր պարագայները զննելու համար ։ « Երբ նշմրի

քակեց իւր տափառն, երբ ծնրադրեց տանջանաց կոճղին առջեւ եւ վեց հարուածներ տեղացին իւր մարմնոյն վրայ, թափուած վեց տաշտ ջրի աղմուկով, մագ մնաց որ նուաղէի ։ Ինչ որ զգացի յայնժամ, լոկ միանգամ զգով զգացած եմ կեանքիս մէջ, այն օրն ուր մարդու մը կախաղան ելնելը տեսայ ։ Բայց Պ. Պրինսլի իսկոյն վարժուեցաւ այս տեսարանաց . մի քանի ամիսէն անտարբերութեամբ կը դիտէր 'զանոնք, մինչեւ իսկ սկսաւ զբօսնուլ անոնցմով ։ Ստոյգ է թէ իւր զբօսանքը նուաղեցաւ երբ ինքն ալ խորագանուեցաւ իւր կարգին ։ Անգլիական օրէնքներն այլանդակութիւններ ունին ։ Աշակերտներուն ներքի էր երկըննալ Դէմք գետն լուացուելու կամ թիաժարելու համար . իրենց արգիլուած էր երեւիլ այն փողոցներուն մէջ որք դէպ այն դետը կ'առաջնորդեն ։ Երբ վարժապետ մը երեւէր, պատրաստ էին ծակէ ծակ փախչիլ, եւ խանութներուն մէջ կը նետուէին ' իրենց որջերուն մէջ ապրող ճագարներու պէս ։ Ասոր անունն էր Շէրֆլէ կամ արուեստ փախըստեան ։ Պ. Պրինսլի կանոնը չը գիտնալով կամ անուշադրութեամբ, մոռցաւ խոստովիլ . սսոր պատիժն եղաւ չուանեայ խորագանի հինգ խոշոր հարուած, եւ քիչ իսկ դտան 'զայս ։

Ֆակ եղած ատեն խորագանուիլը այնքան ծանր է . այլ ծանր է խորագանուիլ այն հասակին մէջ իսկ ուր մարդ ցաւէն աւելի անպատուութենէն կը վախնայ ։ Պ. Պրինսլի օր մը վեց ոտնաշալի բարձր եւ պէխաւոր երիտասարդ մը տեսաւ որ անձկութեամբ կը խորհէր թէ արդեօք հարկ էր հաւանիլ զանակոծուելու ։ Նա պաշտօն մը գնած էր հեծելազօրաց գնդին մէջ, իւր համազգեստը պատրաստ էր, պիտի մեկնէր վարժարանէն յաջորդ օրն իսկ եւ տասն օրէն մըտնել իւր վաշտին մէջ ։ Դժբաղդաբար նա խորդ օրն չափազանց խնամ էր եւ փողոցին մէջ գինով գտած էին 'զայն ։ Այս կըտրիճ պաշտօնակալն խանարհեցաւ ճակատագրին առջեւ, ընդունեցաւ իւր 12 հարուածներն եւ դարձեալ սիրով անշատուեցաւ վարժարանի տեսուչ Պ. Աուտֆօրտէն ։

Ուսուցչապետ Աուտֆօրտն կատակ չը գիտէր . նա հաստատապէս համոզուած էր թէ խորագանն է լաւագոյն ուսուցիչն, եւ

Թէ՛ դայն խնայողութեամբ գործածելն կը նշանակէ մնասել պատանեաց : Այս մասին վէպ մը կը պատմուէր : Կը գրուցէին Թէ՛ աշակերտ մը մերժած լինելով խարաղանաց ենթարկուիլ, վռնտուեր էր . սակայն քիչ ատենէն խելքը գլուխը գալով, Եօրքշիբէն Իդըն վերադարձած էր իւր պատիժ կրելու համար : Երիտասարդը կանոնին համաձայն խարաղան մը կը ճարէ, իւր սնտուկին մէջ կը թխէ՛ դայն եւ տեսչին ետեւէն կ'արշաւէ : Ժոնէվ կ'երթայ՝ չը հասնիր, Լուչէրն կ'երթայ՝ չը հասնիր, վերջապէս Կռան-Սէն-Պէռնաուի վանքը երթալով կը պատահի անոր : Անդ, Պ. Կռտֆօրտ անոր ողիսեան ուղեւորութեան պատմութենէն յուզուելով, որոնց վարձատրել այսքան գովելի յարատեւութիւն մը . եւ վստօքի ճաշարանին մէջ, կրօնաւորաց առջեւ որք չըջանակ կազմած էին եւ զարմացմամբ կը դիտէին, ուժով մը գանակոծեց անոր յետոյքն, որմէ յետոյ սիրով իրեն ընծայեց Մարրէի առաջնորդ գիրք մը . այս պատմութիւնը վէպ մ'է միայն . ընդհակառակն կը հաւաստեն Թէ՛ Պ. Կռտֆօրտ ներեց յանցաւորին : Ասոր հակառակ նմանապէս ստոյգ է Թէ՛ սուրբ Անդրէասի տօնին առաւօտն սաստիկ գանակոծեց Սըր Ֆրէտէրիք Ջօնսդըն,՝ զոր նախաճաշի հրաւիրած էր նոյն օրուան համար : Գանալոծութենէն տաս վայրկեան յետոյ, հրաւիրեալը կը ներկայանար իրեն, եւ Պ. Կռտֆօրտ գողտրիկ միամտութեամբ կ'ըսէր անոր . « Լաւ ուրեմն, Ջօնսդըն, ահա նորէն իրար գտանք » : Իրաւունք չունէի՞նք ըսել Թէ՛, եթէ մեր ուսանողը փոխադրուէին Իդընի դրախտին հմայից մէջ, դժուարաւ պիտի ընտելանային անոր : Գրուցէ աղաղակէին միաճայն . « Թող զմեզ չուտով քարահատները տանին աշխատեցնելու » : Աստուած գիտէ Թէ՛ անոնք կ'անիծեն քարահատներն, այլ չկայ բռնութիւն մը զոր չը նախըտեն խարաղանի երկիւղով բարեխառնեալ աղատութենէ մը :

(Մնացեալ յաջորդ խոսքով)

Թարգմ. ՎԱՀԱՆ Մ. ԷՍԱՆԱՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԼՍ ԳՈՐԾԻՔ
ՍԶԳՈՒԹԵԱՆՅ ԶԱՐԳՍՅՄԱՆ

Ա

Հանրային առողջապահութիւնը տասնեւիններորդ դարու արդիւնքն է : Նորա ընդհանրական ծաւալմամբ գիտութիւն, արուեստ եւ ճարտարութիւն հսկայաքայլ յառաջդիմեցին : Առողջապահութիւնը մասամբ այն մեծ հանճարներու գործն է որք առաջին անգամ ընկերաբանական խնդրոց լուծմամբ զբաղիլ սկսան : Ընկերաբանական գիտութեան մշակմամբ զարդացաւ առողջութեան գիտութիւնն, որովհետեւ ընկերաբանական իւրաքանչիւր խնդիր սերտ կապակցութիւն ունի առողջապահութեան խնդրոց հետ :

Հանրային առողջապահութեան կը վերաբերի Թէ՛ ի՛նչպէս պէտք է ապահովել ազգի մը կամ ժողովրդի մ'առողջութիւնն եւ բարեկեցութիւնը, որք միշտ միաքայլ եւ համընթաց կը յառաջդիմեն : Ակնեւեւ է որ գիտութեան նման, առողջութիւնն ալ բոլորովին նոր եւ ժողովրդականացեալ դիրք մը ստացած է տասնեւիններորդ դարուն առջեւ :

Եթէ հանրային առողջութեան համար գործադրուած առողջապահութեան ժամանակակից հոգատարութիւնքն եւ ձգտումներն ըստ երեւոյթին առաւել տկար կը նկատուին քան հնագոյնի քաղաքակրթութեան այդ մասին ունեցած ձգտումներն եւ հոգատարութիւնքն, եթէ իբր օրինակ կը ներկայացնեն Կեսարաց ժամանակուան Հռոմը՝ իւր հաղորդակցութեան նշանաւոր ճանապարհներով, Իտալիոյ ամեն ծայրերէն մայրաքաղաքն բերուած ջուրերու ահագին ջրամբարներով . եթէ իրաւամբ կը նկատեն որ ներկայ ժամանակաւ ամբողջ աշխարհի վրայ չկայ մայրաքաղաք մը, ուր՝ ինչպէս « յաւիտենական քաղաքին » մէջ՝ ջրի առատութիւնն այնքան մեծ լինէր, որ մէն մի բնակչի հազար լիտր ջուր խնար, այն ատեն բոլորովին ճշմարիտ պէտք է համարել որ հռոմէական քաղաքակրթութիւնը բաղմալիւ խնդիրներ առաւել ընդարձակ եւ

կատարեալ կերպով կ'ըմբռնէր եւ կ'իրագործէր քան միւս ազգերն՝ երբ եւ իցէ։ Բայց երբ համօրէն Նատիում ջրամբարներով ծածկուած էր, երբ ջուրը մինչեւ անգամ Սարինացւոց լեռներէն բերել կուտային, երբ աւելի վերջերն հսկայական չէնքերու կառուցման ձեռնարկեցին՝ որոց աւերակները մինչեւ այժմ եւս զարմանաց եւ պաշտօնեան մէջ կը թողուն ամեն մարդ, պէտք է դիտեալ որ նոքա այս ամեն ինչ ի գործ կը դնէին ո՛չ թէ առողջապահութեան դաղափարէ մղուելով, կամ հանրային առողջութեան համար հոգ տանելու նպատակաւ, այլ միմիայն զարդի եւ պերճութեան համար։ Հնադարեան քաղաքակրթութիւնը կը ձգտէր որ աղբիւրները փառաւոր եւ գեղեցիկ լինէին, աւաղաններն եւ ջրեղջիւրն ակնհաճոյ տեսարան մ'ընծայէին, զովացնէին մարդս, հասարակաց բաղնիքները խօսակցութեան ընտիր վայրեր լինէին, ուր անշուշտ առողջապահութեան վրայ խօսող ալ չէ գտնուած բընաւ։ Այն ժամանակ ամեն ջանք եւ հոգատարութիւնը տօնախմբութեանց եւ ծովային պատերազմի տեսարանաց նուիրուած էին։

Այս ամեն փայլերէն, չռայլութիւններէն եւ չբեղլութիւններէն աւերակաց բեկորներ եւ հեռաւոր յիշատակութիւններ միայն մնացին։ Երբ բարբարոսները հռոմական կայսրութիւնը հիմնայատակ կործանեցին, բոլոր Եւրոպիոյ վրայ թանձր խաւար տիրեց, եւ տասն ամբողջ դարեր հարկ եղան որպէս զի լոյսը յաղթանակէր խաւարին եւ փարատէր զայն։ Բայց պէտք չէ կարծել թէ այս խաւարէն երեւցաւ մեր առջեւ հանրային առողջապահութիւնը։ Նա իւր ծնունդը կը ստորաի վերջին ժամանակուան պահանջման, նորագոյն քաղաքակրթութեան դարձացման։ Իսկ մինչեւ այդ ժամանակ, նա բժշկականութեան աւելորդ եւ անկարեւոր մէկ ձիւղը կը համարուէր եւ վերջին ժամանակները միայն ընկերաբանական դիտութեանց խմբին մէջ իւր անկախ եւ արժանաւոր տեղը գրաւեց։

Այս նոր սահմանաց մէջ, այս յարգելի դրացիութեան մէջ զոր ունի միւս գիտութեանց հետ, նոր ձգտումներու դիտակցութիւնը կը զարթնուն ի նա։ Այս բաղմա-

կողմանի նպատակին հասնելու համար նոր գէնքեր, նոր միջոցներ կարեւոր էին եւ միայն այս պատճառաւ բժիշկները դիմեցին բնագէտներու, բնալոյծներու, երկրաչափներու եւ ճարտարապետներու գործակցութեան, որոց արուեստական գիտութիւններն իսկապէս անհրաժեշտ են յատկապէս գիծերու էութեան եւ ծրագիրներու իրագործման համար։ Այս յարաբերական միաւորութիւնն ապագային արդիւնաւոր հետեւանքներ պիտի ծնի հանրային առողջութեան խնդրոյ պահպանման համար։ Առողջապահութեան սահմանին մէջ իւրաքանչիւր զօրութեան, իւրաքանչիւր դիտութեան համար կան կէտեր զորս չը գիտեն բժիշկները եւ զորս նոքա կրնան ուսանիլ։

Առողջապահութեան համար տակաւին կարեւոր կը համարուի օգտակար դաշնակցութիւն մ'ալ կազմել, որուն կրնայ հասնիլ միայն յաղթելով մեծամեծ դժուարութեանց ամբողջ շարքի մը։ Եւ դժուարութիւնքն են իւր կողմը դրաւել Քաղաքական տնտեսագիտութիւնն եւ Կառավարութիւնը։ Քաղաքական տնտեսագիտութիւնը զբաղած է այն խնդիրներով որոցմով կը պարագի առողջապահութիւնն ալ, միայն թէ առաջին դիտութեան տեսակէտը բոլորովին տարբեր է երկրորդի տեսակէտէն։ Այն նպատակ որուն կը ձգտի Քաղաքական տնտեսագիտութիւնն, աւելի էական քան գործնական է։ Քաղաքական տնտեսագիտութիւնը պարտաւոր է իւր կողմը դրաւել առողջապահութիւնն, գործածել զայն ի շահ իւր որպէս զի նորա տեղեկութեան լուսով օգտուի։ Գալով Կառավարութեան, նա քիչ մը կասկածանօք կը վարուի առողջապահութեան հետ կը վախնայ եւ չընդունիր որ առողջապահութիւնը իւր գործին խառնուի, եւ կը ներկայացնէ զայն իբր իրեն խոչնդոտ։ Անհրաժեշտ է ցրել այս թիւր նախապաշարումները եւ ցոյց տալ որ առողջապահութիւնն անգուղակիան օգնական միայն կրնայ լինիլ. անհրաժեշտ է որ կառավարութիւնն հաւատք եւ վստահութիւն ներշնչէ առողջապահութեան եւ նորա գործիչներու նկատմամբ. առանց կառավարութեան գործակցութեան, հանրային առողջապահութեան գոյութիւնը տարակուսելի է։ Կառավարութիւնը հանրութեան դրամներով կը կառավարէ. մի եւ

նոյն դրամը որպէս պատերազմի, նոյնպէս եւ առողջապահութեան ամենաէական գործութիւնն է :

Առողջապահութիւնը կարճ միջոցի մէջ փայլուն վիճակ մը ստեղծեց իւր համար : Այժմ նա ունի իւր լրացիւններն, իւր տեսութիւններն, իւր ընկերութիւններն, իւր ժողովներն եւ ցուցահանդէսները : Եւ որ աւելի կարեւորն է, կը վայելէ նա հանրային կարծեաց համակրանքը : Սոյն ընդհանուր համակրանաց պատճառը հասկանալի է : Առողջապահութիւնն ամենադիւրամատ չելի լեզուով կը խօսի հանրային առողջութեան պահպանման եւ կենաց երկարութեան վերաբերեալ նիւթերու վրայ, որ ա՛յնքան սիրելի է ամեն մարդու եւ դէպ ի ուր կը ձգտի ամեն մարդ : Ի վերջոյ առողջապահութիւնը կը համապատասխանէ ժամանակակից դարուն ամենէն կարեւոր պահանջմանց եւ ձգտման : Այն ժողովրդոց մէջ, ուր հարստութեան մակերեւոյթը կը բարձրանայ եւ հաւատոյ մակերեւոյթը կ'իջնէ, անդ դրամի եւ ապագայ կենաց հոգին երկրորդական դիրք կ'ընդունի, մինչդեռ առողջ եւ երկայն ասրելու ցանկութիւնն առաջնակարգ դիրք մը կ'ստանայ . եւ այս նպատակին հասնիլ կարելի է միայն առողջապահութեան միջոցաւ : Բայց ինչպէս աւելի դիւրին է բարձր վիճակի մը հասնիլ քան ինքզինքը պահել այդ վիճակին մէջ, նոյնպէս աւելի դիւրին է հա՛րային կարծեաց համակրանքը չահիլ քան կարողանալ պահպանել զայն : Այս նպատակին հասնելու համար պէտք է ասպացուցանել, թէ առողջապահութիւնը իսկապէս կարող է կառավարել այն մեծամեծ չափերն որոնց նուիրած է զինքն : Կառավարել գիտնալու համար անհրաժեշտ է մաքսուիլ եւս դիտնալ :

Պետութեան մը մեծութիւնն եւ բարօրութիւնը երեք պայմաններէ կախում ունի, այն է երկրի աշխարհագրական դրութեան, բնակեալ ժողովուրդէն եւ վարիչ օրէնքներէն : Բայց այս մեծ դործին մէջ առաջնակարգ դիրքն անտարակոյս նոյն իսկ ժողովուրդին կը պատկանի : Պետութեան մը աշխարհագրական դիրքն ո՛րչափ ալ բարեյաջող լինի, կլիմայական պայմաններն ո՛րչափ ալ դժնացուցիչ լինին, ո՛րչափ

ալ օրէնքներն կատարեալ եւ նոցա զարգացումն օգտակար լինին, այսու ամենայնիւ պետութիւնը անկարող է խուսափիլ կործանումէ, եթէ ժողովրդի մէջ վատթար բարքերն եւ սովորութիւններն արմատացած են. նորա առողջութիւնը, կրթութիւնը, ոյժը, ջանասիրութիւնը եւ համեստութիւնը յոյժ ստորին աստիճանի կ'իջնեն : Յետադիմութեան գլխաւոր նշանը պետութեան բնակչաց թուոյն քիչնալն է, ծնունդներու տակաւ առ տակաւ նուազիլն է . իսկ պետութիւն մը ծաղկելու, զարգանալու եւ զօրանալու համար անհրաժեշտ կարեւոր է որ նորա բնակչաց թիւն աճի, դրացի ժողովրդոց համեմատական զարգացման աստիճանաւ : « Թագաւորներու մեծութիւնը, ըսած է Վոպան, իրենց հպատակաց թիւէն կը չափուի » : Ինչ որ տասնեւեօթերորդ դարուն մէջ ճշմարիտ կը համարուէր, ճշմարիտ կը համարուի այժմ : Ներկայ ժողովրդոց մէջ ալ զօրութիւնն եւ բնակչաց աճումն միասին կ'ընթանան . մեր օրերուն մէջ ոյժը միայն թուով կ'աճի : Բնակչաց կանոնաւոր եւ ուղղակի աճումն իւրաքանչիւր քաղաքակիրթ ազգի բնական օրէնքն եւ բարօրութեան յատկանիւնն է . իսկ նոյն աճման նուազումը մեծ վտանգ մ'է պետութեան մը կամ ազգի մը համար :

Անգլիոյ մէջ ժողովուրդի աճումը իւրաքանչիւր տարի 1,000ին 15 մարդ կը հաշուի, ի Գերմանիա՝ 10, յիտալիա եւ ի Պելճիա՝ 7 : Միացեալ Նահանգաց մէջ ներկայ դարու սկիզբէն ի վեր բնակչաց թիւը տասնապատկած է : Գիտենք թէ ո՛րչափ զօրաւոր է այդ պետութիւնն, եւ ո՛րքան ծաղկած է ժողովուրդը Նոր աշխարհի այդ մասին մէջ : Ի Ֆրանսա, ընդհակառակն, բնակչաց աճումն դամ քան զգամ կը նուազի : Այս դարու սկիզբին աճումը 1,000ին 6,02 մարդ էր անդ . 1879ին այդ աճումը 3,54ի իջած էր, իսկ վերջին չորս տարիներու մէջ աւելի եւս նուազած է . 1883ին 2,42 կը ներկայացնէր : Եթէ այս կործանիչ ընթացքը, այսպէս շարունակուի, յառաջիկայ դարու սկզբին բնակչաց աճումը բոլովին պիտի դադրի ի Ֆրանսա :

1871ի պատերազմին ժամանակ Ֆրանսա դրամի կողմէ ազատ չէր : Թէպէտեւ կործանած եւ ներքին թշուառութեան մէջ

ինկած էր, զիւրութեամբ եւ կարճ միջոցի մէջ թ միլիար տուգանք վճարեց: Եւրոպական տէրութիւնք ըստ վիճակագրական տեղեկութեանց 3,355,000,000 Փրանք կը ծախսեն իրենց պատերազմական ելմուտ-ցոյցին համար, 2,841,600 զինուոր հաշուելով: Հետեւաբար թ միլիար Փրանքով զիւրութեամբ կրնար տակաւին մէկ միլիոն զօրք ալ կազմել եւ առ սակաւն տարի մը պահել: Բայց նա այդպիսի զօրաբանակ մը կազմելու անկարող գտնուեցաւ, որովհետեւ մարդ չունէր: Իսկ ըսաներորդ դարու սկիզբին տակաւին ալ աւելի քիչ պիտի ունենայ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ս Ե Ի ՈՒ Կ (1)

Ով Սեւուկ, Սեւուկ, շուտ կըտրէ ճամբան,
Թրուռցէք ըզմեղ, երկնից փոթորիկք:
Օրերորդս իմ կոյս առ դրունս է մահուան,
Օն վաղէ, վաղէ, վաղէ իմ Սեւուկ:

Թէ բացի կողերդ ուժգին մըտալօք,
Երկայն խրխընճամբք ինձ մ'ասեր անգութ:
Անցնելու կան շատ դաշտք եւ անապատք,
Օն վաղէ, վաղէ, վաղէ իմ Սեւուկ:

Չե՞ս լըսեր օդուն մէջ ի՞նչ ժանտ ժըպիտ,
Չե՞ս լըսեր ի՞նչ գոյժ գըժնեայ արկածից:
Փըչէ թաղելոց հոսն երեսս ի վեր,
Օն վաղէ, վաղէ, վաղէ իմ Սեւուկ:

Ո՛հ, այս զոր լըսեմ ես ձայն է պարուն,
Որ զինքն ի տապան տանին տըխրագոյն:
Ո՛վ Տէր... ի՞նչ տեսնեմ... խա՛չ, դագա՛ղ մահու...
Օն վաղէ, վաղէ, վաղէ իմ Սեւուկ:

Կա՞նգ կ'առնուս, Սեւուկ... զօրացի՛ր, յուսա՛:
Ո՛հ, դաւե՛լ կ'ուզես զիս, նենգող նըժոյգ:
Հոն վարէն ամպրոպն ահեղամահու՛ն գայ,
Օն վաղէ, վաղէ, վաղէ իմ Սեւուկ:

Օն վաղէ, Սեւուկ. ուժո՛վ, ե՛ւս ուժով,
Աստուած իմ ի՞նչ կրակ... Աստուած իմ ի՞նչ ցուրտ:
Բիւրերուս վրայ մահն արդէն ծանրանայ,
Վաղէ՛... օն վաղէ՛... վաղէ իմ Սեւուկ:

Եւ հոն ինկաւ ահագնագին
Կայծակնահար ուղղոյն վերայ,
Եւ երիվարն որ ոչ եւս այլ
Ըզգայ զմըտրակն հեծեղազին
Եւ զի զգաւակն ղաւտ ունի,
Ոչ եւս վաղէ, սլացեալ թըռչի:

(1) Հեղինակն այս իւր գիւթական ձին «Ռուել-լոյ» կ'անուանէ:

Հոգմոյն բաշերն տատանած
Գամքան ըզգամ երթայ կատղած,
Ոգեւորեալ է սեւա ըստուերն
Ոտից տրոփմամբ եւ խըրխնջով,
Ինքն ըզգաւակն աղատ ունի,
Ոչ եւս վաղէ, սլացեալ թըռչի:

Շունչ ի բերան փռնդայ. երնէ
Շոգին ջերման եւ քըրտըքին.
Փոշի եւ խիճ ի վեր ցայտէ
Ընդ սըմբակօք օդապարկին.
Ինքն ըզգաւակն աղատ ունի,
Ոչ եւս վաղէ, սլացեալ թըռչի:

Գահաւանդէն մինչեւ յանտառ
Կըտրեց լափեց հարիւր փարախ,
Եւ հուսկ ուրեմն պատուարի մ'
Անյոյսն ըզկողմն ընդ հարկանէ...
Մահն ի վերայ կայ գաւակին
Եւ այլ ոչ եւրս վաղէ ձին:

Եւ այն պահուն տըմոյն նիհար
Այտից վերայ մեռանողին,
Որ քաղցր անուն մի մըմընջէ
Անօտըր գոյնն անդրէն դառնայ,
Եւ ըզմարմինքն սիրաբար
Ամբառնալով անկողնէն վեր,
Կը սկսանի իւր գեղեփայլ
Վարսից ծամերն խաղաղէլ:

« Մա՛յրիկ. դու չես գիտեր թէ ո՛վ
Յընցեց իմ սիրտս այսպէս ուժով.
Ո՛հ, ես կ'ուզեմ զանձամբ առնուլ
Չգեղեցկագոյնն իմ ըզգեստուց.
Ի գիշերիս ընդ մութ նըսեմ,
Չեմ գիտեր այս ինչպէս եղաւ,
Այլ ըզգընդիւնն Սեւուկին
Համարեցայ ես թէ լըսեմ:

« Նայէ՛, մայրիկ, այն ծառոց մէջ
Ուր ուրեք ձեռն իմ ակնարկէ...
Բեզ ո՛չ թըլի թէ մերձեցայ
Կէտ մի փոքրիկ... դեռ նըկատէ:
Ո՛հ, չե՞ս տեսներ փոշոյ մըղեղն
Այն որ հեռուէն կը բարձրանայ...
Չայն չե՞ս ճաննար... հասա՛ւ, հասա՛ւ.
Ո՛վ մայր իմ... սիրտըս թալանայ... »

Բացաւ անգամ մ'եւս իր նըւաղ
Ահիւռնքն շուրջ ողորմելի՛ն,
Խընդրեց զարեւն, ելաւ կըռուէն
Տալով զանուրն սիրելւոյն:
Պարկէշտագեղ առագաստին
Մէջ ըսպասեր նըմա եղո՛ւկն...
Եւ թաղուեցաւ. ո՛հ, յոյք երկրէ,
Առնուք վախճան դուք ի շերմի:

Թարգմ.

Յ. ԲՐԱՒԻ

ԱՐՄՈՒԿԷՍ

ՆՈՐԱՎԷՊ

Լ Ո Ւ Ս Ա Ն Կ Ա Ր Ի Չ Ն

Փարիզցի լուսանկարիչը գրեթե հանձարեղ գաղափար մ'ունենցած է: Ինչպէս որ ասկէ երկու հարիւր տարի առաջ Մինեօ իւր պաքսիմաները կը փաթթէր Պուլաքցի դէմ գրուած երգիծանոց թուղթի մը մէջ, նոյնպէս մեր արուեստագէտն իւր քրոսած էր իւր կենդանագրերը փաթթել Ֆրանսացի մեծանուն վիպասանին՝ Ալֆոնս Գոտէի մէկ սիրուն նորափէպին մէջ: Աւասիկ այդ նորափէպն.

Որովհետեւ փոքրիկ խեղճուկ ընտանիքի մը տեսքն ունէին, եւ իրենց բոլոր կահն կը պարունակէր ձեռքով քշուող սայլակի մը մէջ, առաջուց վճարել տուին վարձագինն, — բաւական ալ ծանր վարձագինն մը, որովհետեւ կը բնակին նորաշէն տան մը հինգերորդ յարկն, այն մեծ անաւարտ պուլվարներէն միոյն վրայ որք լի են նշանակներով, փլածոյներով, տախտակորմով պատած թափուր գետիններով: Թարմ ներկի մը հոտը կայ այդ ընտանեաց վարձած երեք փոքր խցիկներուն մէջ, լուսաւորեալ ուղղակի լոյսով մ'որ աւելի կը ցայտեցնէ պատերուն մերկութիւնը: Աւասիկ նախ եւ առաջ արհեստանոցն իւր մեծ ապակիով, իւր բրուսիական չմինչով մուտ ու ցուրտ, եւ կանխաւ պատրաստուած քիչ մը հանքածուխ, զոր մարդ եկած ատեն միայն պիտի վառեն: Ընտանեաց լուսանկարներն պատէն կախուած են, — հայրը, մայրը, երեք տղայներն, նստած, յոտին, զիրար գրկած, առանձինն, ամեն կարելի զիրքերով. յետոյ, քանի մը յիշատակարաններ, դաշտանկարներ զորս արեւն եղծած է: Այս ամենը մնացած է այն ժամանակէն ուր հարուստ էին եւ ուր հայրն՝ զբօսեկու համար՝ լուսանկարչութիւն կ'ընէր: Այժմ աղքատութիւնն հասած է եւ իւր ձեռքին տակ ուրիշ արհեստ մը չունենալով, կը փորձէ ապրուստ ձարել անով, որով երբեմն կիրակի օրերն իւր ժամանակը կ'անցունէր:

Լուսանկարչական գործին, զոր տղայք երկնոտ սքանչացմամբ կը շրջապատեն, պատուոյ տեղը կը գրաւէ, արհեստանոցին ճիշդ մէջ տեղ, եւ իւր փայլելուն պղինձներով, իւր դողաւոր ջինջ ապակիներով կը թուի գրաւած լինել խեղճ փոքրիկ բնակարանին

բոլոր պերճութիւնն, բոլոր սեթեւեթն: Մնացեալ կահերն հին են, կոտրած, որդնոտած եւ սակաւաթիւ: Մայրն սեւ մետաքսէ ողորմելի շրջադէստ մը հագած է, ծակծկած, ժանեակի կտոր մը գլխուն վրայ, միով բանիւ խանութի մը տեսքն ուր յաճախորդք չեն գար երբէք. հայրն, ինք, գնած է արուեստաւորի գեղեցիկ գլխանոց մ'եւ մետաքսեայ գեղեցիկ թիկնոց մը՝ տպաւորութիւն գործելու համար յաճախորդին վրայ: Այդ շողշողուն հանդերձից տակ, իւր պատրանքներով լի լուսաշող մեծ ճակտով, իւր զարմացկոտ եւ քաղցրահայեաց աչքերով, իւր գործիքէն աւելի նոր դէմք մ'ունի: Եւ ի՞նչպէս կ'երթայ կուգայ խեղճ թշուառ մարդը: Եւ ի՞նչպէս լուրջ կերպով կ'ըմբռնէ իւր նոր արհեստը: Պէտք է լսել զայն երբ կ'ըսէ իւր որդւոց.

— Մի՛ մտնէք սեւ սենեակն:

Սեւ սենեակն.... Օ՛հ....:

Թշուառն ներքնապէս յոյժ խռովեալ է: Վարձագինը վճարուելէ, փայտն, ածուխը գնուելէ յետոյ, այլ եւս սու մը չմնար դրամաբլիղին մէջ: Եւ եթէ յաճախորդները վեր չենեն, եթէ վարը, դրան անկիւնը կախուած կենդանագրոց ապակեւոր շրջանակն բնաւ անցորդ մը չձգէ դէպ յինքն, երեկոյին մանուկներն ի՞նչ պիտի ուտեն: Վերջապէս, փա՛ռք Աստուծոյ, տեղաւորուին աւարտած է: Այլ եւս բան չմնաց նորոգելու, փայլեցնելու:

Այժմ, ամեն ինչ անցորդէն կախում ունի:

Սպասման եւ անձկութեան վայրկեաններ: Հայրն, մայրն, տղայներն, ամեն ոք պատշգամին վրայ կեցած կը հսկէ: Երթեւեկող անձանց մէջ անտարակոյս արուեստագէտ մը պիտի գտնուի, նզովի՛ց արմատ: Բայց ո՛չ: Ամբոխն կ'երթայ, կուգայ, կ'անցնի մայթին եղերքէն: Ոչ ոք կանգ կ'առնու: Ո՛չ, սակայն: Աւասիկ պարոն մ'որ շրջանակին կը մօտենայ. մէկիկ մէկիկ կը դիտէ կենդանագրերն, գոհ դէմք մ'ունի, անշուշտ վեր պիտի ելնէ: Տղայք, խանդավառ, կը պատրաստուին կրակարանը վառել:

— Քիչ մ'ալ սպասենք, կ'ըսէ մայրը խոհեմութեամբ:

Եւ ո՛րչափ ալ իրաւունք ունի: Պարոնն իւր ճանբայն կը շարունակէ սըլլալով:

Ժամ մը, երկու ժամ: Օրն կ'սկսի առելի մթնալ: Երկինից վրայէն մեծ ամպեր կ'անցնին արշաւանոյր: Սակայն, այդ բարձր դիրքին վրայ, կարելի է տակաւին ընտիր փորձեր հանել: Այլ ի՞նչ օգուտ, որովհետեւ ոչ ոք կուգայ:

Ամեն վայրկեան, սրտայուզութիւններ են, սուտ ուրախութիւններ, քայլեր՝ որք սանդուղին վրայ կը լսուին, որք դրան կը մօտենան, ապա յանկարծ կը հեռանան: Անգամ մ'իսկ, զանգակը կը զարնուի մարդ մ'էր որ հին վարձակալը կը հարցնէր: Դէմքերը ամբողջեամբ կը համակին, աչքերը կը լեցուին արցունքով:

— Բայց անհնար է այս, կ'ըսէ հայրն. կարծես թէ վար են առած մեր շրջանակը: Գնա նայէ՛, պզտիկ:

Վայրկեան մը վերջ տղան կը վերադառնայ:

— Շրջանակն միշտ իւր տեղն է, բայց կարծես թէ անդ չլինի. ոչ ոք ուշադրութիւն կ'ընէ:

Մնաց որ, կ'անձրեւէ....:

Արդարեւ, արհեստանոցին ապակիներուն վրայ անձրեւը կ'ուգայ կը զարնուի ծաղրական փոքրիկ չլուկ մը յառաջ բերելով: Պուլվարն հովանոցներով սեւ է համակ: Սենեակը մտնեն, պատուհանը կը գոցեն: Տըղայք կը զոխանցուրտեն, այլ չեն համարձակիր վառել կրակարանն որ ածուխի վերջին պաշարը կը պարունակէ: Սոսկում: Հայրն կը ձեռնէ մեծաքայլ, բռունցքը սեղմած: Եւ մայրն, որպէս զի չտեսնեն իւր լայլը, կը պահուի սեւ սենեկին մէջ: Յանկարծ, մանուկներէն մին, որ անձրեւադադարէ մ'օգուտ քաղելով պատշգամբ ելած է, ուժգնութեամբ կը զարնէ ապակիին:

— Հայրիկ, հայրիկ, վարը շրջանակին առջեւ մէկը կայ:

Սխալած չէ՛. կինն մ'է այն, յոյժ լաւ կին մը, իրաւ որ: Վայրիկ մը կը գիտէ կենդանագրերն, կը վարանի, գլուխը կը վերցնէ....: Ա՛հ, եթէ վերէն իւր վրայ սեւեռած խոշոր աչքերն մէկ մէկ քիչ մագնէս ունենային, ինչպէս չորս չորս վեր սլտի վազէր սանդուղիներէն:

Վերջապէս, կինն որոշում կուտայ. ներս կը մտնէ, վեր կ'երնէ: Աւասիկ է: Շուտով լուցկին ածուխներուն տակ եւ մանուկներն

ալ քովի սենեակը: Եւ մինչդեռ հայրն կը շտկէ իւր գլխանոցն, մայրն կը խոյանայ դուռը բանալու համար, յուզեալ, ժպտուն, ծիծաղոտ, իւր մետաքսեայ հինցած շորջագետին համետ խշրախնով:

— Այո՛, տիկին.... հոս է, հրամանեցէ՛ք:

Ընդ առաջ կը փութան, կը նստեցնեն զայն: Հարաւային գաւառներէն տիկին մ'է, քիչ մը չաղփաղի, բայց յոյժ հաճոյակատար եւ ո՛չ երբէք ագահ իւր կիսադէմքէն: Առաջին փորձը չյաջողիր: Լա՛ւ, նորէն կ'ըստինք, թշուառակա՛ն: Եւ առանց բնաւ սրանդելու, տիկինն վերստին սեղանին վրայ կը դնէ իւր արմուկն եւ կ'զակն իւր ձեռքին մէջ:

Մինչդեռ լուսանկարիչն կը յարդարէ շրջագետին ծաղերն եւ գտակին ժապաւէտները, խեղդուած ծիծաղներ, ապակեպատ փոքրիկ դրան դէմ աղմուկներ կը լսուին: Տղայներն են որ զիրար կը հրմշտեն՝ տեսնելու համար իրենց հայրն որ գլուխը կը դնէ գործիքին կանաչ կտաւին տակ եւ անդ կը մնայ անշարժ, որպէս Յայտնութեան զբէն զալան մը թափանցիկ խոշոր աչքով մը: Ո՛հ, երբոր մեծնան, ամենքն ալ լուսանկարիչ պիտի լինին, ամենքն ալ....: Վերջապէս, աւասիկ լաւ փորձ մը գոր հայրը կը բերէ յաղթանակաւ, քրտնաթոր եւ հեւ ի հեւ: Այդ ձեռնակին եւ սեւին մէջ, տիկինն կը հաճի ծանշել ինքզինքն, տասներկու քարտ կ'ապագարէ, կանխաւ կը վճարէ եւ դուրս կ'երնէ հիացած:

Սենեակէ, դուռը կը գոցուի: Կեցցէ՛ ուրախութիւնն: Տղայք, արձակ համարձակ կը պարեն՝ խանդավր՝ գործիքին շուրջը: Հայրը, խիստ յուզեալ իւր առաջին գործողութենէն, ճակատը կը սրբէ վեհաշուք կերպիւ. յետոյ, որովհետեւ օրը տարածամած է, մայրն կ'իջնէ շուտով ընթրիքին համար բան դնելու, արտասովոր սքանչելի ընթրիք մը, ի պատիւ իրենց տեղաւորման, ինչպէս եւ — որովհետեւ կարգ կանոն պէտք է — կանաչ կողքով մեծ հաշուետուութիւն մը, որոյ մէջ գեղեցիկ տառերով կը գրեն յանձնման օրը, հարաւի տիկինը անուընդ եւ վճարուած գումարը, տասներկու ֆրանք: Իրաւ է թէ չնորհիւ կարկանդակին եւ անուշեղէնին, որով տօնած են իրենց տեղաւորումը, շորհիւ նաեւ քիչ մը ածուխի, չաքարի, մո-

ԶԱՆԱԶԱՆՔ

ԳԵՐՈՒԹԻՒՆՆ Ի ՊՐԷԶԻԴԱ

մի գնման, ծախուց գումարն ձեռք ու ձեռք կը հաւասարի հասոյթի գումարին: Բայց, պահ. եթէ այսօր տասներկու ֆրանք չա- հեցան, տեղաւորման, անձրեւոտ օր մը, երեւակայեցէք թէ ի՞նչ պիտի լինի վաղը: Եւ երեկոյթը կ'անցնի ծրագրներով: Ան- հաւատարի է քանակութիւնն այն ծրագրոց որք կրնան պարունակիլ երեք վաղը խցիկ- ներէ բաղկացեալ սրահի մը մէջ....:

Հետեւեալ օրն, դեղածիծաղ օդ մ'է, եւ ոչ ոք, ոչ մէկ յաճախորդ մինչեւ իրի- կուն: Ի՞նչ կրնանք ընել. վաճառականու- թիւն է այս: Մնաց որ քիչ մը կարկանդակ մնացած է, եւ տղայք անօթի փորանց չեն պաւկիր:

Յաջորդ օրն, նոյնպէս ոչինչ: Կը վերըս- կըսին երկար ժամեր անցունել սպասելով պատշաճմին վրայ, այլ ի զո՛ր: Հարաւի տի- կինն կուգայ առնուլ իւր տասներկու քար- տերն, եւ ամենն այս է: Այդ իրիկուն, հաց ունենալու համար ստիպուած են խը- տեակներէն մին գրաւի դնել: Երկու օր, երեք օր- կ'անցնին այսպէս. այժմ կատար- եալ չքաւորութիւնն է որ կը տիրէ: Թշուառ լուսանկարիչն ծախած է իւր գլխանոցն, իւր թիկնոցն. կը մնայ միայն ծախել իւր դործին, եւ տեղ մը մանել իւր վաճառա- տան սպասաւոր: Մայրն, կուլայ անմխի- թար եւ մանկունք, վառեալ, այլ եւս չեն իսկ երթար դիտել պատշաճմին վրայէն:

Յանկարծ, չարաթ առաւօտ մը, ամե- նէն անակնկալ վայրկեանին, դուռը կը զար- նեն. հարսնիք մ'է, հարսնիք մը ողջոյն, որ հինգ յարկերէն վեր ելած է իւր լուսանը- կարն հանել տալու համար, հարսն, փեսայն, պատուակալ օրիորդն եւ երիտասարդն, բարի մարդիկ սր իրենց կենաց մէջ սուա- ջին անգամ սպիտակ ձեռնոց դրած են եւ կ'ուզեն մշտնջենաւորել անոց յիշատակն: Այդ օրն, երսուէն եւ վեց ֆրանք կը չա- հին. հետեւեալ օրն, կրկինը: Ա՛լ ըմբռն. լուսանկարչանոցն հաստատուած է:

Աւատիկ փարիզեան փոքրիկ վաճառա- կանութեան հազարաւոր հաճախորդներն մին:

ԱԼՖՈՆՍ ՏՈՏԷ

Բիոյ-Եանէյրոյէն (մայրաքաղաք Պրէզի- լիոյ) թղթակից մը հետեւեալ տեղեկութիւն- ները կը հաղորդէ Սաբահաւի Մէսցեալ-Նա- հանգաց լրագրին՝ այն խժդ ժական վարմանց վրայ որոց ենթակայ են ստրուկը ի Պրէզի- լիա, տեղեկութիւններ՝ որք կը յիշեցնեն մեզ այն արիւնահոտ ժամանակներն ուր սեւերն ա՛յնքան կը տառապէին գաղթականաց բռ- նութեան ներքեւ:

Քանի մը ապստամբ սեւամորթներ, որք այրած եւ կողոպտած էին խրճիթ մը, ձեր- բակաւուեցան ոստիկանութենէն եւ բան- տարկուեցան մինչեւ ցըննութիւն իրենց դա- տին: Այլ սպիտակամորթ ժողովուրդն, աը- դարութեան յամր ընթացքէն ձանձրացած, յարձակմամբ առաւ բանտն, յախշտակեց սեւամորթներն եւ կախեց զայնս առանց դատելու: Յետոյ ծայրակտուր դիակներն երկար ատեն ցիցերու ծայրը մնացին, սոս- կում առթելու համար սեւամորթաց:

Ուրիշ պատմութիւն մ'աւելի ահռելի է.

Ռամոն անուն սեւամորթ մը, ամեն օր ծեծ ուտելէ ձանձրացած, փախած էր իւր տիրոջ քովէն: Ժամանակ մը թափառեցաւ անտառին մէջ, այլ երեւան ելնելով՝ ձեր- բակաւուեցաւ: Որպէս զի միւս գերիներն բնաւ կամքի նշոյլ մը չունենան Ռամոնի օ- րինակին հետեւելու, կալուածատէրն որո- չեց ենթարկել զայն հին բարբարոս ժամա- նակաց արժանի տանջանաց: Նախ եւ առաջ դաւաղանի յետուն հարուած զարնել տուաւ անոր. ապա, երբ մտերն կը կախուէին ա- րիւնալի, քաղցախ տակառի մը մէջ թաթ- խել տուաւ զայն, ապա՝ ալիւլի թէ փէթէն «պէտքն էլ ծառայէր այդ»:

Այդ սարսափելի պատիժ չգոհացուց սակայն կալուածատիրոջ զայրոյթն ու վը- րէժխնդրութիւնը. հետեւեալ օր, իւր առ- ջեւ բերել տուաւ զՌամոն, բոլորովին մերկ կապել տուաւ զայն ցիցի մը. յետոյ, հրա- շէկ երկաթ մ'առնելով, սկսաւ այրել մարմ- նոյն ամենամալուստիկ մասերն, առանց ար- գահատելու մարտիրոս սեւամորթին ահռե- լի ազատականներէն, որուն տանջանքն իւր կե-

նաց հետ միայն վերջ դտան՝ երբ վերջապէս ընկճեցաւ, վշտէն սպաննուած, իւր մարմինն համակ վէրք մ'էր զապրատեսիլ:

Եթէ նմանօրինակ իրողութիւնք ճիշդ են, պիտի նարստեն ամեն երկրի մէջ արծարծել ստրկութեան սոսկումն, եւ թերեւս յառաջ պիտի բերեն այն շարժումն որ վերջնականապէս վախճան մը պիտի տայ այդ բարբարոսական եւ ամօթալի օրէնքին, որ բանական էակ մը կը մատնէ իւր նմանեաց միոյն քմահաճոյքին:

Ք Ա Ղ Ո Ւ Ա Տ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

9-15 ՄԱՐՏ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Երէկ իրիկուն Լոնտրայէն հասած Ռիւթէրի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Երեսփոխանական ժողովոյ մէջ Թագուհւոյն մէկ հրամանագիրը կարգացուեր է որ կը յայտնէ թէ՝ նկատելով իրաց վիճակն, Նորին Վեհափառութիւնն որոշեր է ի զէն կոչել անգլիական պահեստի զօրքերն:

— Ֆրանսայի Երեսփոխանական ժողովն 99ի ղէմ 412 ձայնիւ ընդունեց Պ. Ֆէրրիի նախարարութեան ծրագիրն որ կ'առաջարկէր վերահաստատել երեսփոխանական ընտրութիւնները ցանկի վրայ քուէարկութեամբ կատարելու գրութիւնը:

— Անգլիոյ Երեսփոխանական ժողովոյն մէջ, Լորտ Կրանվիլ հարցման մը պատասխանելով, ըսաւ թէ նախարարութիւնը պիտի պահէ իւր զօրաւոր դիրքն յԱֆղանըստան, բայց թէ անտես չպիտի առնէ ո՛ր և է առիթ՝ պատուարեր համաձայնութեան մը յանդէլու համար:

— Թայիւ կը հաստատէ այն պրոյց որուն համեմատ ապստամբութիւն ծագեր է ի Քեաղար, եւ իր յարէ թէ չինական կառավարութիւնը կը վախնայ որ այս ապստամբութիւնն իրենց Գուլճայի խնդրոյն վերաբացման պատճառ լինիլ:

— Մօրիէի Գօսթ կը ծանուցանէ թէ ի Քեդրսպուրի դուստրեալ զօրավարաց խորհրդոյ մը մէջ, Հէրադի Ռուսաց կողմէ գը-

րաւման փափաք յայտնուեր է, եւ որոշուեր է հաղորդել զայս Ջարին կառավարութեան:

— Գերմանական Ռայխսշայէթ կէս-պաշտօնական թերթը կը հաստատէ թէ Վիէննայի ռուսական դեսպան Լոպանով իշխանին Բեդրսպուրի երթալուն նպատակն է՝ կարգադրել առաջիկայ այցելութիւնը զոր Ջարը պիտի տայ Ֆրանս Եղէֆ Կայսեր: Ալեքսանդր Գ. կը փափաքի փոխադարձ այցելութեան երթալ Գերմանիոյ և Աւստրիոյ Վեհապետաց, Սքերնեւիճէի տեսակցութիւնը փոխարինելու համար:

— Նախաձեռնութեամբ Պ. Պլէյսարտէր գերմանացի դրամատիրոջ, Պերլինի սեղանադրական գլխաւոր հաստատութեանց ներկայացուցիչներ ընկերութիւն մը կը կադմեն 1,200,000 մարք գրամագլխով, գնելու համար Պ. Լիւտէրիճէ այն վայրեր զորս վերջերս ստացած էր յԱփրիկէ:

— Բուլիէ Բուրբուէն կը ծանուցանէ թէ, Իւսքիւպէ առնուած պաշտօնական տեղեկութեանց նայելով, Ալպանիոյ խռովութիւնը վերջացած կրնան համարուիլ: Երկու գլխաւորք, Իպրահիմ աղա եւ Գասիմ աղա անուն՝ ձերբակալուելով, Բրիչլինա տարուած են: Բէշլը Լոյս եւս ապահովիչ խոստումներ կուտայ, եւ կ'ըսէ թէ խռովութիւնը բոլորովին անդական հանգամանք մ'ունէր: Կեղակացնէ թէ արտաքին ալ խարհը մատ ունեցած չէ գործին մէջ:

— Ռուսիոյ ներքին գործոց նախարար Դոստոյ կոմսը Խրիմ գնաց: Նախարարի փոխանորդութիւնը պիտի վարէ խորհրդական Պ. Դուրնովո: Զկարծուիր թէ Դոստոյ կոմսն, արձակուրդ ին աւարտումէն յետոյ, վերսկսի վարել նախարարի պաշտօնը: Նըշանակեալ յաջորդն է Պ. Բոլովոնով:

— Աւստրիոյ Երեսփոխանաց ժողովոյ մարտ 18 ի նստին մէջ սարսափելի միջադէպ մը տեղի ունեցաւ: Քնոճ անուն գերմանացի Երեսփոխանն, որ անցեալ օր սաստկապէս քննադատած էր Պոհեմիոյ ընդհանուր կառավարիչն՝ զՊ. Գրաւս, նոր ճառ մ'արտասանեց ընդդէմ այժմու կառավարական զրութեան: Ըսաւ թէ Պոհեմիոյ Գերմանները կը վերածուին նոյն երկրորդական դերին, զոր Կալիչիոյ մէջ Ռիւթենը եւ Դալմատիոյ մէջ Իտալացիք կը կատարեն:

իրաց այդպիսի վիճակ մը չի կրնար տեսել։ Գերմանիա վերջ պիտի տայ գերման տարրին այս հալածման յԱւստրիա, ինչպէս Գերմանիա փութաց օգնութեան հասնիլ իւր եղբարց ի Շլեզվիկ-Հոլշթայն։

Մինչ ատենաբանը կ'արտասանէր այս խօսքեր, Բոլոնացի Նրեստիսան Պ. Ջերքաւըքի ընդմիջում մ'ըրաւ, որ աղմկին մէջ մէջ չլսուեցաւ։ Բոլոր ունկնդիրը կը սուլէին կամ կը ծախահարէին, ուստի Նախագահին հրամանաւ դուրս հանուեցան։ Միքանի երեստիսանք յարձակեցան Պ. Ջերքաւըքի վրայ եւ ժողովարարէն դուրս ըրին զնա։ Ժխորն աւելցաւ, եւ Նրեստիսան մը պոռաց թէ ո՛չ թէ ունկնդիրներն, այլ Նրեստիսաններն իսկ պէտք է դուրս հանել, զի այսպիսի Խորհրդարան մը արտաքսում կ'արծէ։ Նիստն անմիջապէս վերցաւ։ Խորհրդարանական ակըմբոց մէջ սաստիկ յուզում կը տիրէ։

— Իւլանտայի պահապան սրբոյն՝ Ս. Պատրիկի՝ տարեկան տօնն համայն Իւլանտայի մէջ մեծ չքով կատարեցաւ անցեալ երեքշաբթի։ Իւլանտացւոց Խորհրդարանական կուսակցութեան գլուխ Պ. Բաննէլ ի Ուէսթմինստըր Հօլ հացկերոյթի մը նախագահեց, եւ բաժակ առաջարկեց իւլանտական ազգին։ Ըսաւ թէ Իւլանտայի համար կը յուսայ լաւագոյն օրեր, թէ ուշ կամ կանուխ Իւլանտա պիտի լինի ինչ որ իրաւունք ունի լինելու, այսինքն ճշգրիտ ազգ մը, եւ թէ վստահ է իւլանտական դատին վերջնական յաղթութեան վրայ։

— Սրտայոյզ գէպը մը պատահեցաւ ի Լա Հէ, Հոլանտա։ Ճաբոնի քաղաքական գործակալ Պ. Սաքուրատա ուշիւղիւրի հարուածով մը սպաննեցաւ 21 ամեայ մանկամարդ կնոջ մը ձեռամբ։ Պ. Սաքուրատա Պրուսիի մէջ տեսած էր այս աղջիկ, որ պատուաւոր ընտանիքի մը կը պատկանէր, հրապուրած էր զայն, եւ հետը Լա Հէ տարած։ Հոն Ժամանակ մը բնակեցան ամառանոցի մը մէջ։ Աղջիկը, Ժանն Մաուր Լօրէդ, կը յուսար թէ Ճաբոնցին իրեն հետ պիտի ամուսնանար. բայց օր մը կ'իմանայ յանկարծ թէ Պ. Սաքուրատա օրինաւոր կին մ'ունէր արդէն ի Ճաբոն, որ այս օրերս Հոլանտա կուգար։ Պ. Սաքուրատա կ'ուզէր խզել ամեն յարաբերութիւն. բայց խեղճ աղջիկը թող

չէր տար իւր հրապուրիչը։ Մի քանի անգամ կոհներ տեղի ունեցան. Պ. Սաքուրատա մեկնեցաւ Լա Հէ, հասարակաց ծաղու նիւթ չլինելու համար. աղջիկն անոր ետեւէն գնաց. պահ մը հաշտուեցան, եւ դիմակաւոր պարահանդէս մը գնացին։ Բայց ի վերադարձին, պանդոկի մը մէջ, նոր կըռիւէ մը յետոյ, յուսահատ կինը ուշիւղիւր մը պարպեց Ճաբոնցւոյն գլխուն եւ ապա փորձեց դանակով մ'ինքզինք սպաննել, բայց չյաջողեցաւ։ Ոստիկանութիւնը ձերբակալեց զնա։ Սաքուրատա քիչ վերջն հոգին փշելով քաւեց իւր ոճիր։ Օրիորդ Լօրէդ ամեն ինչ խոստովանեցաւ։ Կը ցաւի գործած ոճրն համար, բայց կը յայտարարէ թէ կանխամտածութեամբ գործեց՝ վերէժ լուծելու համար անխորճ մարդէ մը, որ զինք անպատուած եւ բարոյապէս ըսպանած էր։ Տեսնենք թէ հոլանտական արդարութիւնն ի՞նչ պիտի ընէ աղջկան, զոր Բարիկի բարեգութ երգուեալք անշուշտ անմեղ պիտի արձակէին։

Ն Ե Ր Ք Ի Ն

Վեհ. Սուլթանին թիկնապահ Վէլի Բիւզա փաշա՝ որ շաբթուս Պէրլին ուղեւորեցաւ՝ Ն. Կ. Վեհափառութեան կողմէ Իմթիյապի ականակուռ պատուանշանն ինչպէս և Այսսերական ինքնագիր նամակ մը կը տանի յանձնել Գերմանիոյ գահաժառանգ Իլխանին։

Վէլի Բիւզա փաշա պաշտօն ունի միանգամայն ներկայ գտնուելու Պիզմարք իշխանի 70րդ տարեդարձի հանդիսին և Վեհ. Սուլթանին շնորհաւորութիւններն յայտնելով, Իմթիյապի պատուանշանն ընծայել այս առթիւ Ն. Բարձրութեան։ Այս առաջին անգամն է, կարծեմք, որ այս պատուանշան կը նուիրուի արքայական ընտանեաց չ'պատկանող անձի մը։

Վեհ. Սուլթանի պատուիրակը միանգամայն Օսմանիյէի ականակուռ պատուանշանը պիտի ընծայէ Կ. Պոլսոյ գերմանական նախորդ դեսպան եւ այժմ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Հաճֆէլտ կոմսին։

— Աղբիւնուպոլսէն հետեւեալ ամիսը կուլթիւններն ստացանք։

«ինչպէս որ ծանօթ է, Ադրիանուպոլիսը չըջապատուած է երեք գետերէ որք են, Մարիցա, Թուհճա եւ Արտա: Այս վերջինը ամսոյ 9/21ին մի քանի ժամու մէջ յորդելով քաղաքիս ստորին մասը եւ չըջակայ արտերը ծածկեց: Թէեւ 24 ժամ յետոյ քաղաքացաւ, բայց այսու հանդերձ եղած վնասն 200,000 ոսկիէ աւելի կը հաշուի: Բաւական չէրքեր վնասուած եւ շատ արարտեր աւրուած են: Այժմ վախ կայ թէ Մարիցան եւս յորդի: Մարիցան յորդելով առաւել վնաս կը պատճառէ քան թէ միւս երկուքն, վասն զի Մարիցա ծանր ծանր կը յորդի եւ կամաց կամաց իջնելով երկար ժամանակ հիւր կը մնայ մեզ»:

— Կ. Պոլսոյ հրապարակին վրայ ոսկի դրամին հետզհետէ նուազելուն եւ արծաթ դրամին ոռատութեան պատճառաւ, երբեք տական նախարարութիւնը կը խորհի Ասիոյ այլ եւ այլ գաւառաց մէջ իբր վարդ գործածուած Մահմաթէ, Բէքէ, Տաֆա եւ այլ հին ոսկիներն արծաթ դրամով գնել տալով, բաւական քանակութեամբ ոսկի դրամ կոխել տալ Փողերանոցին մէջ:

— Երկրորդ կարգի պաշտօնատարութեան աստիճան տրուեցաւ Գարասիի դաւառին երկրագործական քննիչ Երուանդ Աղաթօն էֆէնտիի:

— Կայս. կառավարութեան կողմէ Պ. Հիրշի դէմ բացուած դատը ներկայացած էր առեւտրական Երկրորդ ատենին որ երկու նիստ ըրաւ երկու կողմանց վիստերը լսելու համար եւ անցեալ շաբաթ օր իւր իւր վճիռը տուաւ:

Մէրէմէուլի Աղէքսանդր էֆէնտի յենւով Պ. Հիրշի օտար հսկատակ լինելուն եւ այլ օրինական կէտերու վրայ, առարկած էր թէ Առեւտրական երկրորդ ատենակըն անձեռնհաս է այս դատին քննութեան համար: Դատարանն իրաւունք տալով Պ. Հիրշի վիստաբանին, ինքզինքն անձեռնհաս յայտարարեց:

— Եգիպտոսի ծովային եւ առողջապահական խորհուրդը մարտ 3էն ի վեր որոշած է քարանձինայի ենթարկել Պոմպէյէն եւ Մատրաէն եկող ուղեւորներն: Այս անօրինութեան առիթ տուած է Պոմպէյի կառավարութեան մէկ հեռագիրն որ կը ծանուցանէ թէ փետր. 24ին վերջացող շաբ-

թուան մէջ քուրայի 45 դէպքեր պատահեր են անդ:

— Եռէտի թագաւորին երկու որդիքը Պէրութէն մեկնած են, եւ այսօր վաղը մայրաքաղաքս կ'սպասուին: Սթըրլի օման հան դեսպան Գարաճա վաչա որ Կ. Պոլիս հրաւիրուած էր արքայազուն ուղեւորաց այցելութեան ժամանակ աստ գտնուելու համար, մայրաքաղաքս հասաւ նախընթաց օրը:

— Թարիգ լրագիրն հետեւեալ տարօրինակ լուրը կուտայ Նէօղոսէն առնով.

« Երկու հազարի չափ զինեալ Պուլղարը որոշեր են ապրիլ 25ին, Խըտրէլէզի օրն, Արեւելեան Րումէլիի մէջ գտնուող Բիկա վանքին մէջ ժողովուելով, երդում ընելէ յետոյ, սահմանադրութն անցնիլ եւ յարձակիլ Սէլանիկի դաւառին վրայ »:

— Թէրճիմանը Հագիգաթ ուրախութեամբ կը ծանուցանէ թէ իսլամ եւ ոչ-իսլամ մանկուոյն անխտիր ուսում աւանդելու համար մայրաքաղաքիս մէջ մեծ վարժարան մը սխիտի հիմնուի, նախաձեռնութեամբ զինուորական բարձրաստիճան անձանց:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Մօտակայ գաւառաց առաջնորդներէն սկսած են գրեր հասնիլ ի Պատրիարքարան, որք կը ծանուցանեն թէ Ռուսական հիւսիսայտոսք թէեւ իրենց յանձնած են Ս. Սինոդի հրաւիրագրերն էջմիածնի կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար, սակայն իրենք սպասողական դիրք մը բռնելով՝ Կեդր. Վարչութեան հրահանգաց պիտի սպասեն, ըստ այնմ վարուելու համար:

— Երուսաղեմի պարտուց բարձման Յանձնաժողովը շաբաթ օրն՝ ի ներկայութեան Պատր. Տեղապահ. Ս. Հօր նիստ ընելով՝ ըսեց Ազգ. Վարչութեան այն որոշմագիրն, որ կը ծանուցանէր թէ Յանձնաժողովոյ առ վարչութիւնն մատուցած բոլոր առաջարկութիւններն ընդունուած են թէեւ, սակայն լիազօրութեան խնդիրն առ այժմ վերստահել արժան դատուած է, մինչեւ որ այս մասին Ազգ. Ժողովոյ կարծիքն ալ առնուի եւ ըստ այնմ ապա գործադրուի:

Յանձնաժողովն իւր գործառնութեանց ձեռնարկելով, յանձնարարեց Պատր. Տեղապահ Հօր որպէս զի մայրաքաղաքիս Թաղ. Խորհրդոց չընթերակաւ մ'ուղղելով, ըստ վերջին պետական մտրդահամարի ցուցակաց հայազգի արուեստներու ցանկը պահանջէ: Յանձնաժողովն՝ ըստ յիշեալ ցուցակաց՝ վճարելի տուրքերն իւրաքանչիւր թաղի վրայ արդարապէս պիտի բաշխէ ի բարոյումն Երուսաղէմի պարտուց:

Յանձնաժողովն իւր գործառնութեանց գործադրութեանը դիւրութիւն մը տալու համար, խնդրեց Վսեմ Յ. Նուրեան էֆէն, տիէ, որ գէթ առժամապէս իբրեւ ատենապետ ստանձնէ եւ վարէ պաշտօնական գործողութիւններն:

— Աղթամարայ վիճակի ժողովրդեան կողմէն մայրաքաղաքս հասած բողոքատուրքիւր հանրագիր մը մեծապէս կը դանդաւի Խաչատուր կաթողիկոսի զանազան առիթներով ի գործ դրած զեղծմանց դէմ: Նոյն հանրագիրը քանի մը վանօրէից անունները թուելով՝ նոցա ամենատխուր վիճակը նկարագրելէ յետոյ, կը յաւելու թէ այդ հանդարեան վանօրայք քիչ ժամանակէն աւելով պիտի դառնան:

— Դարձեալ Աղթամարէն Խիզանցի Յակոբ եպիսկոպոս կը գրէ ի Պատրիարքարան թէ օտար կրօնականք, մանաւանդ Յիսուսեանք, սկսած են մուտ գործել ի տեղիա տեղիս, մանաւանդ ի գիւղօրայս եւ հրաւրել զժողովրդն ի կրօնափոխութիւն, եւ կը խնդրէ որ պատրիարքական կոնդակ մը յղուի յորդորելու համար զժողովուրդն այդ որսորդաց ծուղակը չիյնալու:

— Բեգրսպուրկէն մարտ 4 թուով կը գրեն մեզ.

«Երէկ, ժամասացութենէն զկնի, տեղի ունեցաւ Պետերբուրգի Հայերի կողմից պատգամաւորի ընտրութիւնը. ձայների մեծամասնութեամբ պատգամաւոր ընտրուեց Նոր-Նախիջեւանու քաղաքագլուխ Պ. Սալթիկեանը, որը ժամանակաւորապէս Պետերբուրգէն գտնվում. վաղը կամ միւս օրը արդէն ուղեւորելու է Նոր-Նախիջեւան, ուր միշտ բախտէն զկնի տեղի է ունենալու Բեսարաբիայի թեմի պատգամաւորի ընտրութիւնը: Եկեղեցին խմբուած յարգելի հայ հասարակութիւնը իւր կողմից ցանկու-

թիւն յայտնեց կաթողիկոսական թափուր մնացած դահի վրայ տեսնել Խրիմեան, Մելքիսեդեկ եւ Նար-Աէյ սրբազաններէն մին. այս կարգաւ էլ բաւականին թուով ստորագրութիւններ տեղի ունեցան, որով էլ կարծենք, զեկաւարուելու է Մեծ. Հ. Սալթիկեանը»:

— Էջմիածնէն կը գրեն մեզ.

«Սինոդն հրաւիրեց բոլոր առաջնորդները խորհրդակցելու համար իրաց ներկայ տաղնապալի վիճակին վրայ: Առաջնորդներէն Շուշիի թեմական առաջնորդ Գեր. Տ. Սաղինեանց Սրբազանը միայն եկաւ, ոյր վարմունքը դէպ իրեն դարձուց Կովկասի բոլոր Հայոց ջերմ համակրանքը: Կըսուի թէ Մակար Սրբազան բացասական պատասխան տուած է Սինոդի չընթերակաւ կանխին: Այս անձկալի կացութեան մէջ թէ եւ քանի մը անհաճոյ, բայց եւ այնպէս խիստ քաջալերական դէպքեր ալ տեղի ունեցան: Երեւանի հայազգի քաղաքապետը, քանի մը նշանաւոր հայերու հետ ժողով կազմելով, պատգամաւորութիւն մը կը ղըրկեց երեւանի առաջնորդ Գեր. Սուրենեան Սրբազանին՝ համոզելու համար որ ուսումնարանները կառավարութեան յանձնէ: Սակայն Ն. Գերապատուութիւնը պարտաւելով այս քաղաքավարական դաւաճանութեան համար կազմուած պատգամաւորութեան ընթացքն, ինքն կը յուժայ յէջմիածին՝ իւր կողմէ աւելի ոյժ տալու համար Սինոդին: Սինոդը թէ՛ Թիֆլիզէն եւ թէ՛ այլ բազմաթիւ քաղաքներէ քաջալերական նամակներ կ'ստանայ որք կը զորացնէին նորա բարոյական ոյժը: Պէտք է խոստովանիլ սակայն թէ կային եւ անստորագիր նամակներ ալ որք՝ առ խոհեմութեան՝ կ'ստիպէին Սինոդն համակերպիլ կառավարական որոշման: Կաւկասիոյ ընդհարուր Հայերը գոհ եղած են Սինոդի կարգադրութենէն»:

— Աւստիկ Քաղաքական Ժողովը վերջին նստի գլխաւոր որոշումներն.

1. Աղգ. ժողովոյ Ատենապետ Վսեմ. Երուսաղէմեան Տիգրան էֆէնտիի հետ մէկտեղ ժողովը խորհրդակցութիւն մ'ունեցաւ Ս. Էջմիածնի կաթողիկոսական ընտրութեան համար զրկուելիք պատուիրակաց անուանման խնդրոյն վրայ:

2. Պատր. Գեր. Տեղապահ Հայրը տե-

ղեկացուց թէ կարգ մը անձինք Պատրիարքարանի կողմէն կնքեալ Տիվրիկի ազգային կալուածոց գրասենեակը բացեր են և ինք ևս հարկադրուելու է յզգաստութիւն և ի պատիժ այս ըմբոստ անձանց ինչ ինչ ազդու միջոցներ ձեռք առնելու, այլ սակայն Հոգաբարձութենէն հրաժարեալ ատենապետ Յակոբ էֆ. Զօպանեանի միջամտութեամբ ու բարեխօսութեամբ ետ թողուցեր է իւր ձեռնարկելիք տնօրինութիւններն և վերստին կնքել տուեր է նոյն զբաղմունքները։ Թէ Զօպանեան էֆ. առ ըստիպմանէ Տիվրիկի ազգայնոց և վերջ տալու համար այս տեսակ շփոթութեանց, կը խոստանայ շարունակել իւր ատենապետութեան պաշտօնը։ Ժողովն այս տեղեկութիւնները լսելէ յետոյ, այս մասին ինչ ինչ տնօրինութիւններ ըրաւ և գործադրութիւնը յանձնարարեց Գեր. Տեղապահ Հօր։

Յ. Ժողովն Տնտես. Խորհրդոյ մէկ տեղեկագրէն իմանալով թէ Կէտիկ փաշայի Թաղ. Խորհուրդն Սեբաստացի հանգուցեալ Սարաֆ Յարութիւն աղայի կտակը մինչեւ ցարդ գործադրած չէ, հակառակ ժողովոյ նախկին որոշմանց, հրաւիրած էր զնոյն Թաղ. Խորհուրդը ներկայանալ ի բացատրութիւն. սակայն Թաղ. Խորհուրդն սոյն հրաւերին գրաւոր պատասխան մը տալով յայտարարած էր թէ այդ խնդրոյ համար ներկայանալու բնաւ պէտք չկայ, ըստ որում այդ կտակային խնդիրը Թաղ. Խորհրդոյ համար վերջացեալ խնդիր մ'է։

Ժողովն Թաղ. Խորհրդոյ այս անպատեհ պատասխանին և ընթացքին վրայ՝ որոշեց պայմանաժամ մը տալ յիշեալ Թաղ. Խորհրդոյ ի գործադրութիւն իւր որոշման, և եթէ դարձեալ անգործադրելի մնայ իւր որոշում, յայնժամ տնօրինել հարկ եղածն ըստ օրինի։

Ա. Դարձեալ Տնտես. Խորհրդոյ մէկ տեղեկագրէն իմանալով թէ Բուսէլի Հիսարի եկեղեցին անբաւական եղած է իւր կարեւոր ծախքերն հոգալու և դրամական ծանր տագնապի ենթարկուած է, արտօնութիւն տուաւ Տնտես. Խորհրդոյ որ ըստ իւր առաջարկութեան, 8,000 դրուշի հանգանակութիւն մ'ընել տայ իւր հսկողութեան ներքեւ, ի նպաստ յիշեալ Թաղի եկեղեցւոյ։

— Կրօնական Ժողովոյ Ատենապետ Գեր. Խորէն Արքեպիսկոպոս Նարպէյ այցելութիւն տուաւ երէկ մայրաքաղաքիս Բումանական նախորդ դեսպան Վսեմ. Պ. Մավրոյեէնի՝ որ, ինչպէս կը յիշուի, Վիէնայի դեսպան անուանած է և ի մօտոյ կ'ուղեւորի իւր նոր պաշտօնատեղին։

Գեր. Նարպէյ Սրբազան ողջերթ մաղթեց Ն. Վսեմութեան, և այս առթիւ շնորհաւորեց զԴեսպանն ու Դեսպանուհին որք վերջերս Վիէն. Սուլթանին կողմէ պատուանշաններ ստացան։

— Կալկաթայէն կը ծանուցանեն մեզ թէ մարտի առաջին օրն անդ հասեր է Մկրտիչ Եպիսկոպոս Վեհապետեան որ Սոյ Ամեն. Կաթողիկոսին կողմէ անդ գնացեր է հանգանակութիւն բանալու։

— Խոսող իւղէն, հարուստ Հրէայի աղջիկ մը, Սուլթանա անուն, որ ամուսնացեալ է ու երկու զաւակաց տէր, և վեց ամսէ ի վեր բաժնուած է ամուսնէն՝ որոյ քով կը գտնուին զաւակներն, երէկ մեր Ազգային Պատրիարքարանը դալով, փափաք յայտնեց որ Հայկական եկեղեցւոյ դիրքն ընդունուի։

Պատրիարքական Գեր. Տեղապահ Հայրն անձամբ հարցաքննեց յիշեալ կինն, և ըստ սովորութեան Հրէից Խախտմապետին պիտի իմացունէ։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ատենապետաց Դիւանն ի նիստ դուսմարուելով երէկ ի Ղալաթիա, Ազգ. Ժողովոյ վերջին բանաձեւին համաձայն, դբաղեցաւ յառաջիկայ Կաթողիկոսական ընտրութեան համար կարգելի պատուիրակութեան խնդրովն եւ յետ քանի մը ժամու Խորհրդակցութեան, որոշեց, անցեալ տարուան նման Թուրքիոյ Հայոց մասնակցութեան իրաւունքը ներկայացնելու պաշտօնն յանձնել Կաթողիկոսական Տեղապահ Ամեն. Մարկար Սրբազանի։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ

Պ. ԼԱՔՈՒԹԻ ՄԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՅՈՐԹԻՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ

Իւթիւճեան Կարապետ էֆէնտիի թարգմանութեամբ Արեւելքի մէջ իրրեւ թերթին հրատարակեալ այս հետաքրքրաշարժ և միանգամայն հրահանգիչ վէպին ամբողջ չորս հատորները կազմուած կը վաճառուին մայրաքաղաքիս ամեն հայ գրաւաճառաց քով, և կամուրջին գլուխը ջրավաճառ Պողոս և Յակոբ աղաներու խանութները: Զորս հատորին գինն է 20 դրուշ:

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ Կ Ս. Իւթիւճեան էֆէնտիի հետեւեալ թարգմանութիւնք.

ԹԱՓ. ՀՐԵԱՅ Բ. ԽՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ պատկերազարդ Ա. հատոր.	գին	դրշ	50
ՅԵՐԿՐԷ Ի ԼՈՒՍԻՆ	»	»	7 1/2
ՄԱՐԳԻՉՈՒՀԻ	»	»	7 1/2
ԸՆՏԱՆԵՉՈՒԿ 2 հատոր	»	»	15
ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՅ ԵՐԿՈՒՄԸ			
2 հատոր	»	»	12
ԱՄՈՒՍԵՆՈՒԹԻՒՆՔ ՓԱՐԶԻ	»	»	6

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ

ՊՍԿԵՐԱԶԱՐԴ

Սոյն նոր Քերականն, որ շինուած է դիւրութեամբ եղանակի վրայ և որ կը պարունակէ 120ի չափ մեծ ու փոքր պատկեր ընտիր թղթի վրայ, և մաքուր տպագրութեամբ հրատարակուած է «Բարասար» Մանկանցի տպարանէն:

Գործին գեղեցկութիւնն, մանաւանդ հրապարակի վրայ ասոր համապատասխանող ուրիշ քերական մը չի գտնուիր յոյս կուտան որ ամեն վարժարան ուրախութեամբ պիտի ընդունեն այս քերականն:

Գինն է՝ հատով ասնողին համար 50 փարա:

Մեծ քանակութեամբ դնողաց գոհացուցիչ զեղչ կը տրուի:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, Էսկի Չապրիէ ճատտէսի, թիւ 63 Բարասարի խմբագրատունը: Կը գտնուի նաեւ բոլոր հայ գրավաճառաց և կամուրջի գլուխը ջրավաճառ Պ. Պոլոսի և Պ. Յակոբի քով:

ԲԵՐԱՅԻ ԳԻՇԵՐՆԵՐ

ՀԵՂԵՆԱԿ

Յ. Մ. ՀԱՃԵԱՆ

Սոյն հետաքրքրաշարժ վէպը որ տեղական կեանքէ քաղուած է, խիստ ընտիր երկարութիւն մ'է իւր գեղեցիկ դարձուած ներուձն ու գէպքերու նուրբ կապակցութիւն ներուձն:

Ամբողջ գործը վեց հարիւր երեսներէ բաղացեալ կը ծախուի ի գին 15 դրշ:

Կեդրոնատեղին է, Սրամեան տպարան Յակոբեան խան վերի յարկ. կը գտնուի նաեւ բոլոր հայ գրավաճառաց քով և Պահճէ Գաբու ջրավաճառ Յակոբ և Պողոս աղայներուն խանութն:

ՏԱՐԵՐՔ

ՕՍՄԱՆԵԱՆ ԼԵՉՈՒԻ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատեց

ՄԻՀՐԱՆ ԱՐԻԿԵԱՆ

Սոյն գիրքը՝ որ Օսմ. լեզուի ֆերականութիւնը խիստ գործնական կերպով կաւանդէ, այս անգամ ընտիր եւ մաքուր տպագրութեամբ ի լոյս ընծայուած է. շատ մը բարեփոխումներէ վատ կը պարունակէ նաեւ բազում հրահանգներ, զուտ Արաբերէն և Պարսկերէն գործածելի ասացուածներ և խնամք պատրաստուած բառքերոյ մը:

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց և ջրավաճառ Պողոս և Յակոբ աղաներու քով ի գին 6 դրշ:

(Մարենադարան արդի դասագրքահանէն)

ՄՏԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

ԸՍՏ ԲԵԼԻՍԻԵԻ

(Մայրենի ՈՏ)

Բ. Տպագրութիւն սրբագրեալ

Մասն Առաջին

Դիպուկութեամբ իրաց և եռաց

Օրինակք և նիւթք բերանացի և գրաւոր հրահանգաց. 55ն 8 տարեկան տղայոց համար.

Թ. Թերլեան

Հրատարակիչ Գրավաճառ Յ. Կ. Աճեան

Գին 3 դրուշ արծաթ

Կեդրոնատեղին է Աճեան գրատունը, Կ. Պոլիս, Մէրճան փողոց թիւ 55:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԿԻՍՈՎԻՆ ՀԱՍՏԱՏ ԵՒ ՇԱՐԺԱԿԱՆ




ՇՈԳԵՇԱՐԺ ՄԵՔԵՆԱՅԻՑ

1 էՆ 50 ՁԻՈՒ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱԶԻԳ ՄԵՔԵՆԱՅԻՆԵՐ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅ
ՇԱՐԺԱԿԱՆ
ՅԷՆ 50 ձիու զօրութեամբ

ՈՒՂՂԱԶԻԳ ՄԵՔԵՆԱՅ
1 էՆ 20 ձիու զօրութեամբ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅ
ԿԷՍ ՀԱՍՏԱՏՈՒՆ
ՅԷՆ 50 ձիու զօրութեամբ



Այս բոլոր մեքենայք կազմ և պատրաստ կը գտնուին :

Ժ. ՀԷՐՄԱՆ-ԼԱՇԱԲԵԼ

Ժ. ՊՈՒԼԷ ԸՆԷ. Յաջորդք, Երկրաչափք, — Յօրինիչք .

Փողոց ՊՈՒԱՆՕ, 31—33 (Պուլվար Թրնանո, 4—6) ՓԱՐԻԶ

— Մանրամասն յայտագիր կը դրկուի ձրիաբար —


ՆՈՐ ՓՈՔՐԻԿ ՅԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԻ ԱԺԱՆ ԳՆՈՎ

ՈՍԿԵԱՅ ՇՔԱԴՐԱՄ 1878/ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՐՈՒՆՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷԶ

ՅԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԻՆԵՐ

Կազմյին ըմպելիներ պատրաստելու համար

ՍԷԼԻ ջուր, Լիմոնատ, Սոտա-Ուոմբ, Մրմուռկ գինի, Գարեջուր
Ներքնակողմէն արծաթազօծեալ



Մեծ և փոքր լծակով խողովակներն հաստատուն են և դիւրաւ մաքրելի

Ժ. ՀԷՐՄԱՆ-ԼԱՇԱԲԵԼ

Ժ. ՊՈՒԼԷ ԵՒ ԸՆԷ. Յաջորդք, Երկրաչափք, — Յօրինիչք .

Փողոց ՊՈՒԱՆՕ, 31—33 (Պուլվար Թրնանո 4—6) ՓԱՐԻԶ

Մանրամասն յայտագիր կը դրկուի ձրիաբար

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ